ՇՈՍ + ԱՂՈՐՔ

ԱՂՈԹՔԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

01 Խոսք՝ հովիվ Արմենից

02 Ինչպես օգտագործել այս գիրքը

02 Աղոթքի կենսակերպ ստեղծել

ԱՂՈԹՔԻ ՄՈԴԵԼՆԵՐ

03 Աղոթել Խոսքը

10 Գաբեսի աղոթքը

12 Տերունական աղոթքը

17 Պատերազմական աղոթքներ

23 Աղոթել նրանց համար, ովքեր ունեն Աստծո կարիքը

26 Անձական աղոթքի կենտրոնացում

ԽՈՍՔ՝ ՀՈՎԻՎ ԱՐՄԵՆԻՑ

Սիրելի՛ ընթերցող,

2016թ-ին՝ մեր եկեղեցու հիմնադրումից հետո, մենք մեր սիրտը տրամադրեցինք լինելու աղոթքի մարդիկ: Մեր ընթացքի նշանաբանը շատ պարզ է. «Սկզբում՝ աղոթիր»: Ցանկացած իրավիճակում՝ լավ, թե վատ, մենք փորձում ենք աղոթել նախքան գործելը: Մենք ունենք բերկրալի համոզմունք,որ աղոթքը մեր առաջին արձագանքն է, ոչ թե վերջին միջոցը:

Աղոթքը մի բան է, որ անում ենք հավատի փորձառության մեջ աճելուն զուգընթաց: Եթե դու դեռ աղոթքի փորձառություն չունես, աղոթքի այս ուղեցույցը ճիշտ քեզ համար է: Եթե դու աղոթքի հարուստ փորձառություն ունես, քեզ համար նույնպես սա կարող է օգտակար լինել:

Օգտագործելով աղոթքի աստվածաշնչյան տարբեր մոդելներ և ունենալով աղոթքի որոշակի ուղեցույց՝ աղոթքն ավելի անձնական դարձնելու համար, այս գրքույկը նախատեսված է ուրախություն բերելու Աստծո հետ անցկացրած քո ժամանակի մեջ: Երբ դու հայտնաբերես Նրա հետ ամեն օր զրուցելու գեղեցկությունը, կզգաս Աստծո ներկայությունը, որն ազդեցություն կթողնի քո կյանքի վրա:

Զգալով աղոթքի ուրախությունը՝ այն կդառնա առօրյա կյանքի մի մաս: Իսկ հետո… Նախքան օրը սկսվելը, նախքան քնելը, նախքան դասի կամ աշխատանքի գնալը, նախքան հաղորդագրություն ուղարկելը, նախքան ուտելը, տեղ գնալը կամ ճանապարհորդելը, կամ երբ դժվարությունների ես հանդիպում… ցանկացած իրավիճակում՝ ՍԿԶԲՈՒՄ ԱՂՈԹԻ՛Ր:

Աղոթքը փոխում է ամեն բան:

Հովիվ Արմեն Դիվանյան

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Մենք կարիք չունենք հետևելու հատուկ բանաձևերի՝ Աստծո հետ խոսելու համար, սակայն աղոթքի տարբեր կերպերի գործածումը կարող է օգնել մեզ՝ գտնելու ավելի խորը նպատակ և հաղորդակցություն Նրա հետ աղոթքի միջոցով:

Այս գիրքը նախատեսված է աղոթքի մի քանի տարբերակներ ներկայացնելու համար: Պարտադիր չէ դրանք բոլորը միանգամից ընկալել: Դու կարող ես ամեն օր աղոթքի տարբեր մոդել ընտրել և ժամանակ հատկացնել դրա վրա աշխատելու՝ ըստ քո ընթացքի: Դու կարող ես դրանք օգտագործել քո ուզած հերթականությամբ և կարող ես նույնիսկ մի քանի օր անցկացնել նույն մոդելի մեջ, երբ ավելի հարմար զգաս քեզ դրանում:

Սկսելու համար ընտրիր մի մոդել, որն ուզում ես այսօր օգտագործել աղոթքի մեջ: Աղոթելիս կենտրոնացիր այն ընթացքի վրա, որ տվյալ մոդելը բացահայտում է՝ ժամանակ հատկացնելով ջերմեռանդորեն աղոթելու: Եթե միտքդ ցրվում է, գործածիր այդ մոդելը ուշադրությունդ վերականգնելու համար:

Այս ուղեցույցն օգտագործելու նպատակը քեզ վրա ճնշում ավելացնելը կամ ծանրաբեռնելը չէ: Նպատակը պարզապես քեզ օգնելն է ծանոթանալ աղոթքի աստվածաշնչյան տարբեր մոդելների հետ, որպեսզի քո աղոթքի կյանքը դառնա ավելի բնական, արդյունավետ և բերկրալի: Աղոթքի կյանքն ավելի իմաստալից դարձնելու համար կարող ես նշումներ անել, աղոթքի հոգսեր գրել և երկրպագության երաժշտություն միացնել: Կարևոր քայլն այն է, որպեսզի որոշում կայացնենք պարբերաբար մտնելու Աստծո ներկայության մեջ աղոթքի միջոցով:

Այս ուղեցույցի բուն նպատակն է՝ օգնել քեզ աղոթքի կյանքում նպատակի, արդյունավետության և բավականության մի նոր մակարդակ գտնել: Մինչդեռ աղոթքի համար անհրաժեշտ է ունենալ հաստատուն որոշում և կարգապահություն՝ աղոթքն առօրյա սովորություն դարձնելու համար, պետք է նաև հիշենք, որ դա արտոնություն է, ոչ թե պարտավորություն: Աղոթքի մեջ Աստծո ներկայության մեջ մտնելն արտոնություն է:

ՍՏԵՂԾԵԼ ԱՂՈԹՔԻ ԿԵՆՍԱԿԵՐՊ

«Առավոտյան լուսածագից շատ առաջ ելնելով, Նա գնաց մի ամայի տեղ և այնտեղ աղոթում էր»: Մարկոս 1.35

Աղոթքն ամենաարդյունավետը դառնում է այն ժամանակ, երբ աղոթում ենք ոչ թե երբ պատահի, այլ երբ զարգացնում ենք որպես ապրելակերպ: Հասկանալու համար, թե ինչպես կարող ենք աղոթքի կենսակերպ ունենալ, կարող ենք նայել Հիսուսի օրինակին, որ Նա թողեց մեզ Իր երկրավոր կյանքի ընթացքում:

Ունեցիր որոշակի ժամանակ

Հիսուսն արթնանում էր վաղ առավոտյան, որպեսզի Իր Երկնային Հոր հետ ժամանակ անցկացներ: Օրվա մեջ ժամանակ որոշիր Աստծուն հանդիպելու համար, լինի դա առավոտյան, կեսօրին, կամ երեկոյան, և հավատարմորեն պահիր դա:

Ունեցիր որոշակի վայր

Հիսուսն ուներ կոնկրետ վայր, որտեղ գնում էր աղոթելու: Աղոթքի համար որոշակի տեղ ունենալը մեզ ազատում է շեղումներից և ազատություն է տալիս բարձրաձայն աղոթելու և երկրպագելու:

Ունեցիր որոշակի ծրագիր

Երբ Հիսուսն Իր աշակերտներին աղոթել էր սովորեցնում, նրանց աղոթքի օրինակ տվեց: Մենք այն անվանում ենք «Տերունական աղոթք»: Այդ օրինակը, ինչպես այլ գործիքներ ևս, դու կարող ես գտնել այս ուղեցույցում: Ամեն օր աղոթելով, մեր աղոթքի ծրագիրը կարող է փոփոխվել, գուցե ներառելով երկրպագության երաժշտություն, Աստվածաշնչի ընթերցանություն, կամ Աստծուն լսելու լուռ ժամանակ: Պարտադիր չէ, որ աղոթքը միշտ նույն ձևն ունենա: ծրագիրն ընդամենն օգնում է մեզ Աստծո հետ պարբերաբար հաղորդակցվելիս:

ԱՂՈԹԵԼ ԽՈՍՔԸ

Աստծո Խոսքն ամենաարժեքավոր գործիքներից մեկն է ամենօրյա կենդանի աղոթքի կյանք կառուցելու համար: Այն զորություն, ճշմարտություն և քաջալերանք է բերում մեր աղոթքի կյանքում: Սկսենք Դավիթ թագավորի 23-րդ սաղմոսից: Ժամանակ հատկացրու այն կարդալու համար, իսկ հետո օգտագործիր ներքևում եղած աղոթքը որպես օրինակ, թե ինչպես կարելի է սաղմոսն օգտագործել Աստծո հետ հաղորդակցվելու համար:

Խոսք.

Տերն իմ հովիվն է, ես ոչնչի կարիք չեմ ունենա: Ինձ պառկեցնում է խոտավետ արոտներում, ինձ առաջնորդում է դեպի հանդարտ ջրերը: Հոգիս վերականգնում է: Իր անվան համար ինձ առաջնորդում է դեպի արդարության շավիղները: Եթե անգամ մահվան ստվերի ձորից անցնեմ, չարից չեմ վախենա, քանի որ Դու ինձ հետ ես, Քո ցուպն ու գավազանը՝ նրանք են ինձ մխիթարում: Սեղան ես պատրաստում իմ առջև իմ թշնամիների ներկայությամբ. գլուխս յուղով ես օծում, իմ բաժակը հորդում է: Իսկապես բարիքն ու ողորմությունն ինձ են հետևելու կյանքիս բոլոր օրերում, ու հավիտյան Տիրոջ տանն եմ բնակվելու:

Սաղմոս 23

Աղոթք.

Աստված, Դու ես ինձ պահում, և ես գիտեմ, որ Դու հոգ ես տանում ինձ համար: Շնորհակալ եմ ինձ հանդարտ վայրեր առաջնորդելու համար: Դու ես իմ զորության և եռանդի աղբյուրը: Դու օգնում ես, որ ես առաջ գնամ, և առաջնորդում ես իմաստալից և ազատ կյանքի: Ես գիտեմ, որ երբ հանդիպեմ խավար ժամանակների ու դժվարությունների, չպետք է վախենամ, քանի որ Դու ինձ հետ ես: Քո ներկաությունն ու զորությունն ինձ մխիթարություն են բերում: Ես գիտեմ, որ Դու ճանապարհ ես պատրաստում ինձ համար, և իմ թշնամիները չեն կարող դիպչել ինձ, որովհետև Դու հոգ ես տանում ինձ համար: Ես գիտեմ, որ Դու օրհնել ես ինձ, և ես շնորհակալ եմ, որ Դու ինձ կոնկրետ նպատակի համար ես ընտրել ու օծել: Քո օրհնություններն ավելին են, քան ես կարող էի խնդրել: Ես գիտեմ, որ Դու բարի ես, Աստված, և ինձ հետ ես իմ կյանքի բոլոր օրերում: Դու ընտրել ես ինձ, իսկ ես ընտրել եմ Քեզ, և դա նշանակում է, որ ես Քո ներկայության մեջ կլինեմ հավիտյան:

Հաջորդ հատվածում մենք օգտագործում ենք աստվածաշնչյան տարբեր խոսքեր և աղոթքի մեջ դավանում դրանց խոստումները: Դու սա կարող ես դարձնել այնքան անձնական, որքան ցանկանում ես: Դու ամենամեծ օգուտը կարող ես ստանալ, երբ աղոթում ես այն Խոսքի համեմատ, որ Աստված քեզ ցույց է տալիս Աստվածաշնչում և անձնապես կապ ունի քո ներկայիս կյանքի հետ:

Խոսք.

«Մոտեցեք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ»:

Հակոբոս 4.8

Աղոթք.

Երկնայի՜ն Հայր, Դու խոստացել ես, որ եթե ես մոտենամ Քեզ, Դու կմոտենաս ինձ: Ես այսօր քո ներկայության կարիքն ունեմ և մոտենում եմ Քեզ աղոթքի, երկրպագության և Քո Խոսքը կարդալու միջոցով: Ես բացում եմ իմ սիրտը Քո առաջ և խնդրում, որ մոտ լինես ինձ և փոխելով դարձնես Քեզ նման:

Խոսք.

«Քննի՛ր ինձ, ո՛վ Աստված, և իմացի՛ր իմ սիրտը, փորձի՛ր ինձ և իմացի՛ր իմ մտածումները: Եվ տե՛ս, թե արդյոք կորստյան տանող շարժառիթ կա՞ իմ մեջ, և ինձ հավիտենական ճանապարհով առաջնորդի՛ր»:
Սաղմոս 139.23-24

Աղոթք.

Հա՛յր Աստված, խնդրում եմ, քննիր իմ սիրտը: Եթե Դու իմ մեջ ինչ-որ վատ բան գտնես, խնդրում եմ, ցույց տուր ինձ, և օգնիր հեռացնել իմ կյանքից: Առաջնորդիր ինձ այնպիսի կյանք ապրել, որ մարդկանց կձգի դեպի Քեզ: Օգնիր ինձ իմ կյանքը երկրի վրա այնպես ապրել, որ նպաստի հավիտենական կյանք ունենալուն:

Խոսք.

«Բայց դուք նախ խնդրեցե՛ք Աստծո թագավորությունը և Նրա արդարությունը, և այս բոլոր բաները պիտի ավելացվեն ձեզ»:
Մատթեոս 6.33

Աղոթք.

Քո Խոսքն ինձ ասում է, որ եթե ես առաջինը փնտրեմ Քո թագավորությունն ու Քո արդարությունը, Դու ինձ կառաջնորդես օրհնության, նպատակի և ազատության կյանք ունենալու: Այսօր ես Քոնն եմ, Աստված, և ես այս օրը տալիս եմ Քեզ: Օգնիր ինձ առաջինը կենտրոնանալ Քո առաջնահերթությունների վրա՝ բաժնեկցելով Քո սերը և ճանաչեցնելով Քո անունը: Ես գիտեմ, որ կենտրոնանալով Քեզ վրա, ոչ թե ինձ վրա, ես կստանամ ուրախություն և խաղաղություն:

Խոսք.

«Խոնարհվեցե՛ք Տիրոջ առաջ, և Նա ձեզ պիտի բարձրացնի»:
Հակոբոս 4.10

Աղոթք.

Աստվա՛ծ, Դու խոստացել ես, որ եթե ես խոնարհվեմ Քո առաջ, Դու կբարձրացնես ինձ: Ես այսօր ընդունում եմ, որ ինքնուրույն չեմ կարող հասնել հաջողության, և ամեն պահ Քո կարիքն ունեմ: Ես խոնարհվում եմ Քո առաջ և խնդրում, որ այսօր գործես իմ մեջ և իմ միջոցով: Այսօր (նշիր օրվա կոնկրետ ժամանակը) իմ ժամանակը, եռանդը, խորհուրդներն ու խոսքերը Քոնն են: Օգտագործիր ինձ Քո նպատակների համար, Տե՛ր: Ես վստահում եմ Քեզ, որ Դու ինձ հետ ես և բարձրացնում ես ինձ:

Խոսք.

«Որովհետև Աստված երկչոտության հոգի չի տվել, այլ՝ զորության, սիրո և զգաստության»:

Բ Տիմոթեոս 1.7

Աղոթք.

Հա՛յր, ես գիտեմ, որ Դու ինձ չես տվել երկչոտության հոգի, այլ՝ զորության, սիրո և զգաստության: Երբ իմ միտքը վերահսկողությունից դուրս է գալիս, աղաչում եմ, նորոգիր հոգիս և թող զորությունը, սերն ու զգաստությունը լցնեն ինձ: Օգնիր ինձ ամեն օր ավելի ու ավելի նմանվել Քեզ: Ես հռչակում եմ, որ այն ամենը, ինչ Քեզնից չէ, հեռանա ինձնից Հիսուսի զորավոր անունով: Ես հռչակում եմ, որ ես չունեմ վախ, այլ ունեմ առողջ և արթուն միտք:

Խոսք.

«Գիտենք նաև, որ բոլոր բաները միասին բարուն են գործակից նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն և կանչված են ըստ Նրա նպատակի»:

Հռոմեացիս 8.28

Աղոթք.

Աստվա՛ծ, Դու Քո Խոսքում խոստանում ես, որ ամեն բան գործակից ես անում դեպի բարին ինձ համար: Հենց հիմա, իմ կյանքում կան պարագաներ, որ ինձ բարի չեն թվում և ես այս պահին դրանցում բարիք չեմ տեսնում (ասա Աստծուն կոնկրետ իրավիճակների մասին, որոնք քեզ ցավ և անհանգստություն են պատճառում): Թեև ես այսպես եմ զգում, ես որոշում եմ ավելի շատ հավատալ Քո ճշմարտությանը, քան իմ զգացողությանը: Երբ Դու ասում ես, որ ամեն բան բարիին ես գործակից անելու ինձ համար, ես հավատում եմ Քեզ: Նույնիսկ անհույս թվացող իրավիճակներում ես գիտեմ, որ դու գործում ես ինձ համար, և որ Դու ավելին ես ուզում ինձ համար, քան ինքս կարող էի ցանկանալ ինձ համար: Շնորհակալ եմ, որ ինձ համար նպատակ ունես և իմ կյանքի բոլոր պարագաները գործածում ես դեպի բարին:

Խոսք.

«Ամեն ժամանակ Նրա՛ն հուսացեք, ո՛վ ժողովուրդ. Նրա առջև բա՛ց արեք ձեր սրտերը, Աստված մեր ապաստանն է»:

Սաղմոս 62.8

Աղոթք.

Հա՛յր, Դու ինձ հրավիրում ես իմ սիրտը բացել Քո առաջ: Դու իմ ապաստարանն ես, և ես գիտեմ, որ այն ամենը ինչ ես մտածում եմ, զգում կամ անում, կարող եմ բերել Քո առաջ: Իմանալով, որ Դու ինձ համար ապահով վայր ես, ես իմ սրտում եղած ամեն բան տալիս եմ Քեզ (ասա կոնկրետ բաներ, որ ունես քո սրտում): Ինձ սկսած անհանգստացնող բաներից մինչև ինձ հիացնող բաները, ակնկալիքներից մինչև ինձ վախեցնող բաները, ես բերում եմ դեպի Քեզ, որովհետև գիտեմ, որ կարող եմ վստահել Քեզ: Առաջնորդիր ինձ բոլոր ասպարեզներում, Հիսուսի անունով:

Խոսք.

«Տերն Իր բարության գանձը՝ երկինքը, քեզ համար կբացի, որ քո երկրի անձրևը տա իր ժամանակին, և քո ձեռքի բոլոր գործերն օրհնի»:

Բ Օրինաց 28.12

Աղոթք.

Տե՛ր, ես հավատում եմ, որ Դու ունես ամեն բան, ինչի կարիքը ես ունեմ, և ուզում եմ, որ օրհնես ինձ: Դու Քո Խոսքում ինձ ասում ես, որ կբացես երկինքը՝ օրհնելու իմ ձեռքի գործը: Ես գիտեմ, որ առանց Քեզ ոչինչ չեմ կարող անել: Խնդրում եմ, բաց երկինքը, և Քո օրհնություններն ու զորությունը թափիր ինձ վրա: Ես Քեզ եմ հանձնում իմ գործերն ու ձգտումները և խնդրում եմ Քո օրհնությունն ու հաջողությունն այն ամենի մեջ, ինչին իմ ձեռքերը դիպչում են (հանձնիր քո հատուկ ձգտումները Նրան): Թող ամեն բան լինի միայն Քո փառքի համար, և թող մարդիկ տեսնեն Քո զորությունը և բարությունը գործելիս:

Խոսք.

«Որովհետև համոզված եմ, որ ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ զորությունները, ո՛չ ներկա, ո՛չ էլ գալիք բաները, ո՛չ բարձրությունը, ո՛չ խորությունը, ո՛չ էլ մի ուրիշ արարած չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է»:

Հռոմեացիս 8.38-39

Աղոթք.

Աստվա՛ծ, ես ակնածում եմ Քո սիրո առաջ, որ Դու ունես իմ հանդեպ: Դու այնքան մեծ ես, իսկ ես այնքան փոքր, սակայն Դու ինձ կատարելապես ես սիրում: Ես այսօր հիշեցնում եմ իմ անձին, որ ոչ մի բան չի կարող ինձ բաժանել Քո սիրուց: Չկա մի բան, որ ես կարող եմ անել, որպեսզի ձեռք բերեմ կամ կորցնեմ Քո սերը: Դու ինձ սիրում ես առանց նախապայմանների: Քանի որ ես չգիտեմ որևէ բան երկրի վրա, ժամանակի կամ տարածության մեջ, կամ ցանկացած գոյություն ունեցող բան, որ կարողանա ինձ բաժանել Քո սիրուց, ես կապրեմ վստահ և խաղաղ՝ իմանալով, որ Դու միշտ սիրել ես և կսիրես ինձ:

Խոսք.

«Քո դեմ ստեղծված ո՛չ մի զենք հաջողություն չի ունենալու, և ամեն մի լեզու, որ դատաստանի է ելնելու քո դեմ, պիտի դատապարտվի: Սա է Տիրոջ ծառաների ժառանգությունը, և նրանց արդարությունն Ինձանից է,- ասում է Տերը»:

Եսայի 54.17

Աղոթք.

Տե՛ր, ես գիտեմ, որ ոչ մի զենք, որ իմ դեմ է, չի հաջողվի, որովհետև ես Քո զավակն եմ: Ես այս պահին ճնշում եմ զգում իմ կյանքում և ինձ երբեմն թվում է, որ կյանքը կհաղթի ինձ (ասա Աստծուն այն անհանգստությունների մասին, որ ճնշում են քեզ): Թեև ես այսպես եմ զգում, սակայն հավատով դավանում եմ Քո խոստումը, որ ոչ մի զենք չի կարող ինձ հաղթել, և որ ինձ մեղադրողները, որ դեմ են կանգնում ինձ, կլռեն: Այս ճշմարտությունը վավերացված է Քո սիրով և փրկարար զորությամբ իմ կյանքում:

Խոսք.

«Ոչ մի բանի մասին մի՛ մտահոգվեք, այլ թող ամեն բանում աղոթքով, աղաչանքով ու գոհությամբ՝ ձեր խնդրանքները հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն հասկացողությունից վեր է, պիտի պահի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով»:

Փիլիպպեցիս 4.6-7

Աղոթք.

Հա՛յր, սիրտս անհանգիստ է (ասա Աստծուն, թե ինչն է քեզ անհանգստացնում): Ես չեմ ուզում դա և շնորհակալ եմ, որ կարող եմ գալ Քեզ մոտ և խաղաղություն գտնել: Դու ինձ հրավիրում ես անհանգստությունը փոխարինել աղոթքով, և մինչդեռ միտքս ու սիրտս անհանգիստ են, ես գալիս եմ դեպ Քեզ՝ իմանալով, որ Դու բժշկություն ու հանգստություն ես ապահովում իմ հոգու համար: Շնորհակալ եմ ինձ շունչ և կյանք պարգևելու համար: Շնորհակալ եմ, որ զարմանալի ու սքանչելի ձևով եմ ստեղծված՝ ըստ Քո պատկերի: Ես մի կողմ եմ դնում իմ բոլոր դժվարությունները, իմ ֆիզիկական և մտավոր անհանգստությունները, և ցանկացած փորձ՝ դրանք կառավարելու (ասա Նրան, թե հատկապես ինչ ես ուզում մի կողմ դնել): Ես այդ բոլորը Քեզ եմ հանձնում: Ես Քո կարիքն ունեմ: Ես Քո խաղաղության կարիքն ունեմ, որ վեր է մարդկային ամեն հասկացողությունից: Նույնիսկ եթե ամեն բան շուրջս անկայուն է, ես աղոթում եմ, որ Քո խաղաղությունն ակնհայտ լինի իմ սրտում և կյանքում: Պահպանիր իմ սիրտն ու միտքը, Աստվա՛ծ: Ես վստահ եմ, որ Դու հավատարիմ ես, և այսօր ընդունում եմ Քո խաղաղությունն իմ կյանքի մեջ:

Խոսք.

«Քանի որ Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղությա՛ն խորհուրդներ և ո՛չ թե չարիքի, որ ձեզ ապագա ու հույս տամ: Այն ժամանակ դուք կկանչեք Ինձ, կգնաք ու կաղոթեք Ինձ, և Ես կլսեմ ձեզ: Ինձ կփնտրեք ու կգտնեք, երբ Ինձ փնտրեք ձեր ամբողջ սրտով»:

Երեմիա 29.11-13

Աղոթք.

Ես շատ ծրագրեր եմ կազմում իմ կյանքի համար, սակայն գիտեմ, որ Քո ծրագրերը լավագույնն են ինձ համար: Դու ինձ ասում ես, որ Դու ինձ համար օրհնության ծրագրեր ունես, որ ես հույս և ապագա ունենամ: Շնորհակալ եմ, որ ինձ այնքան ես սիրում, որ իմ կյանքի համար ծրագիր ունես: Դու խոստացել ես, որ երբ ես կանչեմ Քեզ, Դու կլսես ինձ: Շնորհակալ եմ ինձ լսելու համար, երբ աղոթում եմ: Ես վստահ եմ, որ ծառայում եմ այնպիսի Աստծո, որ հոգ է տանում իմ կյանքի համար: Ես ուզում եմ ամեն օր գտնել Քեզ, և Դու ասում ես, որ եթե ես փնտրեմ Քեզ, կգտնեմ Քեզ: Ես իմ ծրագրերը դնում եմ Քո ոտքերի մոտ և ընդունում եմ Քո ծրագրերն ինձ համար (նշիր քո ծրագրերն ու դիր դրանք Աստծո առաջ): Դու տեսնում ես ամբողջական պատկերը և ինձնից լավ գիտես, թե ինչն է ինձ համար ավելի լավ: Ես վստահում եմ Քեզ և խնդրում, որ Դու առաջնորդես ինձ Քո ծրագրերի մեջ:

Խոսք.

«Ես քեզ երբեք չեմ թողնի և ոչ էլ կլքեմ»:

Եբրայեցիս 13.5

Աղոթք.

Հա՛յր, ես մխիթարված եմ, որ Դու ինձ երբեք չես թողնի: Դու միշտ ինձ հետ ես, և ես ապահով եմ Քեզ հետ: Կյանքի ընթացքով անցնելով և նոր իրավիճակների հանդիպելով՝ ես գիտեմ, որ միայնակ չեմ, քանի որ Դու իմ կողքին ես: Օգնիր ինձ զգալ Քո ներկայությունը: Երբ ես անվստահ եմ կամ վախենում եմ, աղոթում եմ, որ մխիթարես ինձ Քո Սուրբ Հոգով և հիշեցնես ինձ, որ ես երբեք մենակ չեմ, քանի որ Դու խոստացել ես միշտ ինձ հետ լինել:

Խոսք.

«Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ…»:

Մատթեոս 11.28-30

Աղոթք.

Տե՛ր Հիսուս, ես հոգնած եմ ու բեռնավորված (ասա Աստծուն, թե որ ասպարեզներում ես դու հոգնել): Ես ուժասպառ եմ եղել մտքով և ֆիզիկապես: Կյանքը դժվար է, և ես չեմ կարողանում առաջ քայլել: Դու ինձ հրավիրում ես գալ դեպ Քեզ երբ ես հոգնած եմ, և ես ընկնում եմ Քո ոտքերի մոտ՝ ծայրահեղ կարիք ունենալով հանգստի, խաղաղության և ապագայի: Ցո՛ւյց տուր ինձ, թե որտեղ եմ ես ցանկանում ինքնուրույն ինչ-որ բաներ անել: Ցույց տուր ինձ, թե որտեղ ես կարիք ունեմ հանգստանալու, փոխարենը՝ պայքարելու: Սովորեցրու ինձ Քո ճանապարհները: Ցո՛ւյց տուր ինձ, թե ինչպես քայլեմ հեզությամբ և խոնարհությամբ: Ես գիտեմ, որ Քո ճանապարհները բարձր են իմ ճանապարհներից, և ես աղոթում եմ, որ Դու վերափոխես իմ սիրտն ու միտքը, որպեսզի ավելի նմանվեմ Քեզ:

Խոսք.

«Բարձրյալի գաղտնի տեղում ապրողն Ամենակարողի ստվերի տակ է հանգչելու: Տիրոջ մասին ասելու եմ. «Իմ ապավենն ու ամրոցն է, իմ Աստվածը, Ում վրա է հույս»:

Սաղմոս 91.1-2

Աղոթք.

Աստվա՛ծ, ես բնակվում եմ Քո գաղտնի տեղում և հանգստանում եմ Քո ստվերում, Ամենակարող իմ Աստված: Երբ ես հանդիպում եմ անորոշության կամ վախի (խոստովանիր դրանք Աստծուն), գիտեմ, որ կարող եմ գալ Քեզ մոտ որպես իմ ապահով վայր: Շնորհակալ եմ Քո զորության և պաշտպանության համար:

Խոսք.

«Քո թագավորությունը հավիտենական թագավորություն է, իսկ Քո տերությունը՝ սերնդից սերունդ: Տերը վեր է բարձրացնում բոլոր ընկածներին ու ոտքի է կանգնեցնում բոլոր կռացածներին»:
Սաղմոս 145.13-14

Աղոթք.

Ամենակարո՛ղ Աստված, աղոթքի մեջ դավանելով Քո խոստումները, որ Քո Խոսքի մեջ են՝ ես փառավորում եմ Քո բնավորությունը: Վստահելի, հավատարիմ, ահա թե ով ես Դու: Շնորհակալ եմ, որ կարող եմ վստահ լինել, որ Դու հավատարիմ ես իմ հանդեպ: Ես գիտեմ, որ երբ խոնարհությամբ մոտենամ Քեզ և իմ սիրտը Քեզ նվիրաբերեմ, Դու կբարձրացնես ինձ:

ԳԱԲԵՍԻ ԱՂՈԹՔԸ

«Եվ Գաբեսն աղաղակեց Իսրայելի Աստծուն՝ ասելով. «Երանի՜ թե օրհնեիր ինձ ու ընդարձակեիր իմ սահմանը, և Քո ձեռքն ինձ հետ լիներ, ու փրկեիր ինձ չարից, որպեսզի վիշտ չտեսնեմ»: Եվ Աստված նրան շնորհեց այն, ինչ նա խնդրել էր»:
Ա Մնացորդաց 4.10

Օրհնություն

Գաբեսն իր աղոթքը սկսում է՝ Աստծուց օրհնություն խնդրելով իր համար: Մենք Աստծո օրհնության կարիքն ունենք, որպեսզի ավելի լավ հանդերձավորված լինենք՝ փոփոխություն բերելու Նրա Թագավորության համար: Մենք կարիք ունենք պաշարի, հոգևոր պարգևների և իմաստության, որպեսզի կարողանանք օրհնել մյուսներին այն ամենով, ինչ Աստված տվել է մեզ: Հակոբոս 4.2-3-ն ասում է. «Չունեք, որովհետև չեք խնդրում: Խնդրում եմ և չեք ստանում, որովհետև վատ նպատակով եք խնդրում, որ ձեր ցանկություններին ծառայեցնեք»: Աստված ուզում է օրհնել մեզ, սակայն սպասում է, որ մենք ուղիղ սրտով դիմենք Նրան: Մենք մեծ Աստված ունենք և կարող ենք համարձակորեն խնդրել Նրա օրհնությունը: Ինչպես Հակոբոսն է մատնանշում, Աստված տեսնում է մեր սիրտը, և երբ Աստծո օրհնությունը խնդրում ենք ցանկությամբ՝ ոչ միայն ինքներս մեզ օգնելու, այլև ուրիշների, դա գրավում է Նրա ուշադրությունը:

«Երանի՜ թե օրհնեիր ինձ…»:
Ա Մնացորդաց 4.10

Աստծուց օրհնություն խնդրիր: Ընդունիր, որ Նրա օրհնության կարիքն ունես, և սիրտդ ուղղիր՝ խնդրելու ավելին, քան կարիք ունես, որպեսզի կարողանաս ուրիշների էլ օրհնել:

Աղոթք.

Հա՛յր Աստված, աղոթում եմ, որ ինձ օրհնես ավելին, քան ես կարիք ունեմ, որպեսզի կարողանամ օրհնել մյուսներին: Աղոթում եմ, որ ավելին տաս, որպեսզի ես էլ կարողանամ առատորեն տալ մյուսներին և բավարարել նրանց առօրյա կարիքները Քո անունով: Խնդրում եմ, ինձ ավելի շատ հոգևոր պարգևներ տուր, որպեսզի կարողանամ օգտակար լինել եկեղեցուն և ավելի արդյունավետ լինել Աստծո թագավորության համար: Ես աղոթում եմ իմաստության և զանազանության առատության համար, որպեսզի օգնեմ մարդկանց իմանալ Քո մասին և այնպիսի որոշում կայացնել, որ կփառավորի Քեզ: Օգնիր ինձ միշտ աչքի առաջ ունենալ Քո առատ օրհնությունները, որպեսզի երբեք եսակենտրոն չդառնամ, այլ կենտրոնանամ Քո տվածները մարդկանց ծառայելու համար գործածելու վրա:

Ազդեցություն

Գաբեսը դիմում է ավելի մեծ ազդեցության համար: Աստծո օրհնությունները մեր կյանքում աճելով՝ մենք ավելի մեծ հնարավորություն կունենանք ազդելու մեր շրջակա աշխարհի վրա Տիրոջ համար: Աստված ունի կարողություն՝ մեզ մեծապես օրհնելու և մեծ զորություն՝ հնարավորության դռներ բացելու մեզ համար, որպեսզի կարողանանք փոփոխություններ առաջ բերել: Մենք ուզում ենք մտնել այն դռներով, որ միայն Նա կարող է բացել, և Նա արձագանքում է, երբ մենք հատուկ կերպով խնդրում եմ Նրան ավելի շատ ազդեցություն տալ մեզ Իր անվան համար:

«Ընդարձակեիր իմ սահմանը...»:
Ա Մնացորդաց 4.10

Աղոթիր ավելի մեծ ազդեցության համար: Իմացիր, որ Աստված կարող է ճանապարհ պատրաստել, վստահիր Նրան, և Նա դռներ կբացի և կառաջնորդի քեզ քո կյանքի համար լավագույն ուղիով Իր փառքի համար:

Աղոթք.

Աստվա՛ծ, ինձ արդյունավետ դարձրու ազդեցության ոլորտում և նոր դռներ բացիր ինձ համար, որպեսզի կարողանամ ազդել և ավելի շատ մարդկանց հասնել (նշիր կոնկրետ ասպարեզներ, որտեղ դու կցանկանայիր ավելի մեծ ազդեցություն ունենալ): Օգնիր ինձ լավ տնտես լինել այն պատասխանատվությունների մեջ, որ Դու վստահել ես ինձ: Ես աղոթում եմ, որ ազդեցության ավելի մեծ ոլորտ ունենամ Քո փառքի համար:

Ներկայություն.

Տևական ազդեցություն ունենալու համար մենք Աստծո ներկայության կարիքն ունենք մեր կյանքում: Երբ Աստծո զորությունը գործում է մեր մեջ, Նա կարող է շատ ավելին անել, քան մենք կարող ենք պատկերացնել (Եփեսացիս 3.20): Օրհնություն և ազդեցություն խնդրելով՝ մենք պետք է խնդրենք նաև Նրա ներկայությունը, ինչպես Գաբեսն արեց, որպեսզի գործենք ոչ թե մեր սեփական կարողությամբ, այլ Ամենակարող Աստծո ներկայության միջոցով:

«Եվ Քո ձեռքն ինձ հետ լիներ...»:
Ա Մնացորդաց 4.10

Խոնարհաբար ընդունիր, որ Աստծո ներկայության կարիքն ունես: Ապավինիր Նրան և ավելի շատ ներկայություն խնդրիր քո կյանքում այսօր:

Աղոթք.

Տե՛ր, ես գիտեմ, որ առանց Քեզ ոչինչ եմ: Ես ինքնուրույն չեմ կարող անել այն, ինչ Դու ինձ կանչել ես անելու: Ես իմ կյանքում ծայրահեղ կարիք ունեմ Քո ներկայության: Ես ամբողջովին Քեզնից եմ կախված: Ես գիտակցում եմ, որ այն նույն Հոգին, որ Հիսուս Քրիստոսին հարություն տվեց, ապրում է իմ մեջ: Աղոթում եմ, որ Քո Հոգու զորությամբ ինձ օգնես հաջողության հասնելու այն հնարավորությունների մեջ, որ տվել ես ինձ: Շնորհակալ եմ, որ ինձ հետ ես: Ես երբեք չէի ցանկանա այս օրը դիմավորել առանց Քեզ:

Պաշտպանություն.

Եվ վերջում Գաբեսը խնդրում է, որ Տերը պաշտպանի իրեն: Եթե մենք ազդեցություն ունենանք աշխարհի վրա Հիսուսի համար, պետք է հասկանանք, որ հակառակորդը կաշխատի կանգնեցնել մեզ: Աղոթիր, որ Աստված ոչ միայն պաշտպանի մեզ, եթե հակառակորդը հարձակվի, այլ որ հակառակորդի հարձակումներից Նրա պաշտպանությունը լինի առաջին տեղում: Հիսուսն արդեն հաղթել է, այնպես որ կարիք չունենք վախենալու: Աստված խոստանում է մեզ հետ լինել և պաշտպանել մեզ, և քանի որ Նա մեզ հետ է, մենք վախենալու բան չունենք (Հռոմեացիս 8.31):

«Ու փրկեիր ինձ չարից...»:
Ա Մնացորդաց 4.10

Վստահիր Աստծուն, որ կարող է պաշտպանել քեզ: Ասա Նրան այն ասպարեզները, որտեղ դու կարիք ունես Նրա պաշտպանության, և խնդրիր, որպեսզի Նա պահպանի նաև այն ասպարեզները, որ դու դեռ չես տեսնում:

Աղոթք.

Աստվա՛ծ, աղոթում եմ, որ իմ կյանքի համար սահմանած Քո նպատակի մեջ քայլելիս՝ կանգնեցնես հակառակորդի ցանկացած հարձակում իմ հանդեպ: Խնդրում եմ, պաշտպանիր իմ մարմինը, միտքն ու զգացմունքները: Թույլ մի՛ տուր, որ սատանան տեղ գտնի իմ կյանքում: Ես աղոթում եմ, որ Դու չարից պահես նաև իմ ընտանիքն ու համայնքը: Ես գիտեմ, որ Նա, Ով իմ մեջ է, շատ ավելի մեծ է, քան նա, որ աշխարհում է, այնպես որ ես վախենալու բան չունեմ: Շնորհակալ եմ, որ հետևում ես ինձ: Ես սիրում եմ Քեզ և վստահում եմ Քեզ:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԸ

Տերունական աղոթքը հաճախ են արտասանում եկեղեցիներում կամ կրոնական արարողությունների ժամանակ, սակայն այդ աղոթքի մեջ շատ ավելին կա: Հիսուսն աղոթքի այս մոդելը ներկայացրեց որպես օրինակ, որպեսզի մեզ սովորեցնի այնպես աղոթել, որ կապվենք Աստծո հետ և զորություն ստանանք՝ մեծ բաներ իրականացնելու Նրա միջոցով:

> *«Այնպես եղավ, որ Նա մի վայրում աղոթում էր, և երբ վերջացրեց, Իր աշակերտներից մեկն ասաց. «Տե՛ր, մեզ աղոթել սովորեցրու…»:*
> **Ղուկաս 11.1**

> *«Ո՛վ Հայր մեր, որ երկնքում ես, Քո անունը սուրբ լինի. Քո թագավորությունը գա, Քո կամքը լինի, ինչպես երկնքում՝ այնպես էլ երկրի վրա: Մեր ամենօրյա հացը տու՛ր մեզ այսօր: Ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես մենք էլ ներում ենք մեր պարտականներին. և մեզ փորձության մի տանի՛ր, հապա չարից մեզ ազատի՛ր, որովհետև Քոնն է՝ թագավորությունը, զորությունը և փառքը հավիտյանս: Ամեն»:*
> **Մատթեոս 6.9-13**

Հաղորդակցվելով՝ կապվիր Աստծո հետ

«Ո՛վ Հայր մեր, որ երկնքում ես»

Աստծուն չի հետաքրքրում մեր՝ կրոնով զբաղվելը, ընդհակառակը, Նա ուզում է հաղորդակցվել մեզ հետ: Աստված մեզ որդեգրել է որպես Իր զավակներ և ուրախանում է, երբ մենք Նրան Հայր ենք կոչում: Մեր աղոթքն Աստծո հետ հաղորդակցության դավանանքով սկսելը մեզ համար զորություն է և ուրախացնում է Աստծուն:

> *«Որովհետև դուք կապանքի հոգի չստացաք, որ նորից վախի մեջ լինեք, այլ դուք որդեգրության Հոգին ստացաք, որով մենք աղաղակում ենք՝ Աբբա՛, Հա՛յր»:*
> **Հռոմեացիս 8.15**

Դավանիր Աստծո հետ քո մտերիմ հաղորդակցությունը՝ դիմելով Նրան որպես քեզ սիրող Հայր և շնորհակալություն հայտնելով, որ Նրա զավակն ես:

> **Աղոթք.**
> Հա՛յր, ես այսօր աղոթքով գալիս եմ դեպ Քեզ և երախտապարտ եմ, որ Քո զավակն եմ: Ես գիտեմ, որ մեղավոր եմ, բայց Դու ներել ես ինձ և որդեգրել որպես Քո սեփական զավակ, և ես այնքան երախտապարտ եմ, որ կարող եմ Քեզ Հայր անվանել: Շնորհակալ եմ ինձ սիրելու համար: Ես սիրում եմ Քեզ:

Երկրպագիր Նրա անվանը

«Քո անունը սուրբ լինի…»:

Աստծուն դուր է գալիս, երբ մենք երկրպագում ենք Նրան, և մեծ զորություն կա Նրա անվան մեջ: Ահա Նրա մի քանի անուններ, որոնք մեզ օգնում են անձնապես և առանձնահատուկ կերպով երկրպագել Նրան.

Աստված արդար է. Նա մաքրում է մեզ:
Աստված սուրբ է. Նա մեզ կանչեց և առանձնացրեց:
Աստված բժշկող է. Նա բժշկում է մեր բոլոր հիվանդությունները:
Աստված հաղթության դրոշ է. Նա հաղթում է մեր թշնամիներին:
Աստված հովիվ է. Նա մեր խաղաղությունն է փոթորկի ժամանակ:
Աստված հոգատար է. Նա հոգ է տանում մեր բոլոր կարիքների համար:

«Տիրոջ անունն ամուր աշտարակ է, արդարն այնտեղ է վազում ու ապաստան գտնում»:
Առակաց 18.10

Բարձրաձայն տուր Աստծո այդ անունները: Երբ մենք հռչակում ենք, թե ով է Նա, մենք ոչ միայն երկրպագում ենք Նրան, այլ նաև ինքներս մեզ հիշեցնում ենք, թե որքան հզոր և մեծ է մեր Աստվածը:

Աղոթք.

Աստված, ես ակնածանքով եմ գալիս Քո առջև: Քո անունն ամուր աշտարակ է, պաշտպանության և ապահովության վայր ինձ համար: Ես Քեզ փառավորում եմ որպես իմ Բժիշկ, իմ Հովիվ և Հաղթության Դրոշ: Դու ես իմ Խաղաղությունը, ինձ Խնամողը, իմ Արդարությունը և ինձ Սրբացնողը: Քո անունը վեհ է, և ես երկրպագում եմ Քեզ:

Առաջինը խնդրիր Նրա օրակարգը

«Քո կամքը լինի, ինչպես երկնքում՝ այնպես էլ երկրի վրա...»:
Աստծո որդի լինելը կապ ունի այն բանի հետ, որ հոգ տանենք այն բաների համար, ինչ Նա է հոգ տանում: Մենք գիտենք, որ Նրա կամքը կատարյալ է և ընդունում ենք Նրա իմաստությունն ու ինքնիշխանությունը, երբ աղոթում ենք, որ առաջինը Նրա օրակարգը լինի:

«Բայց դուք նախ Աստծո թագավորությունը փնտրեցեք, և այս բոլոր բաները պիտի ավելացվեն ձեզ»:
Ղուկաս 12.31

Ժամանակ հատկացրու, որպեսզի կենտրոնանաս այն բաների վրա, ինչի վրա Նա է կենտրոնանում: Նրա առաջնահերթությունները ներառում են՝

- Կորսվածների փրկությունը:
- Իմաստություն և առաջնորդություն իշխանություն ունեցողների համար. ծնողների, հոգևոր առաջնորդների, կառավարության և աշխատանքային ղեկավարների:
- Նրա նպատակի իրականացումը մեր կյանքում:

Աղոթք.

Աստվա՛ծ, ես ընդունում եմ, որ երկրի վրա չկա ավելի լավ ծրագիր, քան Քոնը, և ես աղոթում եմ, որ Քո կամքը կատարվի իմ կյանքում (նշիր այն ասպարեզները, որտեղ այսօր ավելի շատ Աստծո ներկայության կարիք ունես) և այս աշխարհում: Աշխարհը կորսված է ու հուսահատ կերպով Քո կարիքն ունի, և ես աղոթում եմ, որ բոլոր մարդիկ Քեզ ընդունեն որպես իրենց Տերն ու Փրկիչը: Ես աղոթում եմ իմ կյանքի ավագների համար (հատկապես աղոթիր ծնողների, հոգևոր առաջնորդների, կառավարության, գործատուների և քո կյանքի մյուս առաջնորդների համար), որպեսզի նրանց գերբնական իմաստություն

և զանազանություն տաս առաջնորդելիս: Քո կամքի և նպատակի վերաբերյալ հայտնություն տուր նրանց: Ես այսօր կրկին Քեզ եմ հանձնում իմ կյանքը. թող Քո կամքը լինի իմ կյանքում: Ցանկացած բան, որ Դու ուզում ես անել իմ մեջ և իմ միջոցով, ես կանեմ: Ես այսօր իմաստություն և հստակություն եմ խնդրում, որպեսզի ինձ ցույց տաս իմ հետագա քայլերը:

Ամեն բանի համար կախված եղիր Նրանից

«Մեր ամենօրյա հացը տու՛ր մեզ այսօր»:
Աստված խոստանում է բավարարել մեր բոլոր կարիքները և ցանկանում է, որ մենք Իր մոտ գնանք մեր բոլոր խնդիրներով, կարիքներով ու ցանկություններով և վստահենք Նրան, որ Նա ամեն բան կապահովի:

«Աչքերս դեպի լեռներն եմ բարձրացնելու, որտեղից իմ օգնությունն է գալու: Իմ օգնությունը Տիրոջից է, Ով երկինքն ու երկիրը ստեղծեց»:
Սաղմոս 121.1-2

Խնդրիր Աստծուն քո այսօրվա կարիքի համար: Գուցե օգտակար լինի գրել քո մտքի անհանգստություններն ու սրտի փափագները: Դու կարող ես դրանք բերել Նրա առջև և այնքան վստահել, որ կարողանաս այդ բոլորը հանձնել Նրան: Կարող է օգտակար լինել ֆիզիկապես ձեռքերդ Նրա առջև տարածելը, ցույց տալով, որ լիովին հանձնվում ես Նրան: Խնդիրները կարող են լինել կամ մերը, կամ Աստծունը: Դրանք չեն կարող միաժամանակ երկուսինը լինել:

Աղոթք.

Հա՛յր, ես ընդունում եմ, որ այն ամենը, ինչի կարիքը ես այսօր ունեմ, Քեզնից է գալու: Դու ես ստեղծել երկինքն ու երկիրը և շատ ավելի լավ գիտես, թե ինչպես լուծել իմ կյանքի բոլոր խնդիրները, այնպես որ ես կատարելապես Քեզ եմ հանձնում դրանք (Աստծուն ասա, թե հատկապես ինչ կա քո մտքում և սրտում և այդ ամենը հանձնիր Նրան): Ես քեզ եմ նայում, որ օգնես ինձ, պահես ինձ և Քո խաղաղությունը տաս ինձ: Հիշեցրու ինձ Քո հույսի և զորության մասին այսօր: Նախապես շնորհակալ եմ իմ կարիքները հոգալու համար:

Ներիր և ներվիր

«Ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես մենք էլ ներում ենք մեր պարտականներին»:
Աստված մեզ կատարյալ ներում է առաջարկում, և մենք կարող ենք ցանկացած ժամանակ այն ընդունել: Երբ մենք հեռանում ենք մեր մեղքերից և ստանում Նրա ներումը, մեր սիրտն ավելի պատրաստ է լինում մյուսներին ներելու:

«Եթե խոստովանենք մեր մեղքերը, ապա Նա հավատարիմ ու արդար է՝ մեր մեղքերը մեզ ներելու և մեզ բոլոր անիրավություններից մաքրելու համար»:
Ա Հովհաննես 1.9

Խնդրիր Աստծուն ստուգել քո սիրտն ու կյանքը և ցույց տալ այն ասպարեզները, որտեղ դու, հնարավոր է, Նրանից ներում խնդրելու կարիք ունես: Այնուհետև քո հերթն է՝ ներելու նրանց, ովքեր վիրավորել են քեզ: Մենք նույնիսկ կարող ենք նախապես ներել մարդկանց: Խնդրիր Աստծուն ներել քեզ և օգնել, որպեսզի ներես մյուսներին:

Աղոթք.

Աստվա՛ծ, շատ շնորհակալ եմ ներման պարգևն ինձ շնորհելու համար: Ցույց տուր ինձ իմ կյանքի այն ասպարեզները, որոնք ես կարիք ունեմ Քո առաջ բերելու, որպեսզի ներում և բժշկություն ստանամ: Ես խոստովանում եմ, որ պայքարներ ունեմ մեղքի դեմ (պատմիր Աստծուն քո կյանքի մեղքի ասպարեզների մասին), և ես գիտեմ, որ Դու ուզում ես, որ ես նորից մաքուր լինեմ: Խնդրում եմ, ներիր ինձ իմ մեղքերը: Շնորհակալ եմ Քո անխափան շնորհն ինձ ցույց տալու համար: Ինչպես որ Դու անհատույց ներեցիր ինձ, ես էլ ուզում եմ անհատույց ներել մյուսներին: Խնդրում եմ, օգնիր ներել իմ կրած բոլոր վիրավորանքները: Ես Քեզ եմ հանձնում նրանց, ովքեր նեղացրել են ինձ և վստահում եմ Քեզ, որ Դու Քո կատարյալ կամքի համեմատ կհարթես այդ բոլոր իրավիճակները:

Մտիր հոգևոր պատերազմի մեջ

«Եվ մեզ փորձության մի՛ տանիր, հապա չարից մեզ ազատի՛ր»:
Հոգևոր պատերազմը կարող է դժվար հասկանալի թվալ, սակայն Աստվածաշունչն ասում է, որ մենք ունենք հակառակորդ, որ փորձում է թալանել մեզ, սպանել մեզ և կործանել մեզ: Աղոթելիս, մենք դեմ ենք կանգնում հակառակորդին և պայքարում ենք հաղթողի դիրքից Քրիստոսում, քանի որ զորացած ենք Նրա Սուրբ Հոգով: Աստծո Խոսքի մեջ զորություն կա, և սատանայի ասած ցանակացած ստություն պետք է փոխարինել Աստծո ճշմարտությամբ:

«Որովհետև մենք մարմնի և արյան հետ չենք պատերազմում, այլ՝ իշխանությունների դեմ, զորությունների դեմ, այս աշխարհի խավարի իշխանների և բարձր տեղերում եղող հոգևոր չարության դեմ»:
Եփեսացիս 6.12

Հասկանալով, որ հակառակորդն ուզում է կործանել քեզ՝ դու կարող ես լույս սփռել նրա ստությունների վրա և Աստծո ճշմարտությունը դավանել քո կյանքի վրա: Խնդրիր Աստծուն քեզ ցույց տալ ցանկացած սուտ, որին հավատում ես, կամ պայքարի ասպարեզներ, որ ունես քո կյանքում: Խնդրիր Նրան բացահայտել հակառակորդին և օգնել քեզ՝ հասկանալու և ընդունելու Աստծո ճշմարտությունը: Հիսուսի անունը կանչելը մեզ ազդեցություն է ունենում հոգևոր աշխարհում: Աստվածաշունչը Հակոբոս 4-7-ում ասում է, որ եթե մենք դեմ կանգնենք սատանային, նա մեզնից կփախչի: Աղոթքի միջոցով մենք կարող ենք դեմ կանգնել նրան և առաջ գնալ ազատության մեջ:

Աղոթք.

Աստվա՛ծ, ես գիտակցում եմ, որ իմ պայքարն այսօր ոչ թե իմ շրջապատի մարդկանց կամ իրավիճակների դեմ է, այլ՝ հակառակորդի: Խնդրում եմ, օգնիր ինձ տեսնել, թե ինչպես է հակառակորդը փորձում ինձ խաբել: Օգնիր ինձ գիտակցել նրա ստերը, գերի վերցնել դրանք և իմ բոլոր մտքերը հնազանդեցնել Քո Խոսքի ճշմարտությանը (գրի առ այն ասպարեզները, որ Աստված քեզ ցույց է տալիս, որտեղ դու հավատացել ես ստությանը և կարիք ունես այն փոխարինել Աստծո ճշմարտությամբ): Մինչդեռ հակառակորդն ուզում է կործանել ինձ, ես գիտեմ, որ Դու եկար կյանք տալու ինձ, այն էլ՝ լիառատ: Ես Հիսուսի անունն եմ կանչում իմ կյանքի վրա և հռչակում եմ, որ իմ դեմ կազմված ոչ մի զենք չի հաջողվելու: Ես կարիք չունեմ չարից վախենալու, քանի որ Նա, Ով իմ մեջ է, շատ ավելի մեծ է, քան նա, որ այս աշխարհում է:

Դավանիր քո հավատն Աստծո զորության հանդեպ

«Որովհետև Քոնն է՝ թագավորությունը, զորությունը և փառքը հավիտյանս»:
Աստված շատ ավելի հզոր է, քան ցանկացած իրավիճակ, այնպես որ մեր աղոթքը կարող ենք ավարտել՝ դավանելով Նրա իշխանությունն ու զորությունը և մեր միտքը կենտրոնացնելով այն ճշմարտության և հույսի վրա, թե ով է Նա և ինչ կարող է անել:

> *«Ա՛խ, Տեր Աստված, Դու ես ստեղծել երկինքն ու երկիրը Քո մեծ զորությամբ և Քո մեկնած բազկով. Քեզ համար ոչ մի դժվար բան չկա»:*
> **Երեմիա 32.17**

Ինքդ քեզ հիշեցրու Աստծո անսահմանափակ զորության մասին, որից հետո սկսիր փառաբանել Նրան և դավանել քո հավատը Նրա հանդեպ.

- Քոնն է թագավորությունը. ողջ իշխանությունը Քեզ է պատկանում:
- Քոնն է զորությունը. ողջ զորությունը բխում է Քեզնից:
- Քոնն է փառքը. Քո հաղթությունը կատարյալ է լինելու:

Աղոթք.

Հա՛յր Աստված, Քեզ համար անհնարին ոչ մի բան չկա: Քո մեծ զորությամբ ամեն բան հնարավոր է: Ողջ իշխանությունը Քոնն է, ողջ զորությունը Քոնն է, և ես գիտեմ, որ Քո հաղթությունը կատարյալ է լինելու: Դու սքանչելի ես, և ես երկրպագում եմ Քեզ: Ես փառաբանում եմ Քեզ Քո զորության և ներկայության համար իմ կյանքում: Դու իմ Աստվածն ես և արժանի ես ողջ փառքերին:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ

Աղոթքը միայն Աստծո հետ հաղորդակցություն չէ, այլ հակամարտություն է հակառակորդի դեմ: Երբ Հիսուսը երկրի վրա էր, Նա դեմ առ դեմ հանդիպեց սատանային, երբ փորձվում էր անապատում (տես Մատթեոս 4 և Ղուկաս 4), և ամեն անգամ, երբ հակառակորդը փորձում էր Հիսուսին, Նա պատասխանում էր Աստվածաշնչին հղում անելով: Նա գործածում էր Ճշմարտության Սուրը թշնամու հարձակումներից պաշտպանվելու համար: Պետք է հասկանալ, որ Հիսուսն այդ հակամարտության մեջ չէր պայքարում որպես Աստված: Նա սատանայի դեմ պայքարում էր որպես մարդ՝ Աստծո Խոսքով: Մենք էլ պետք է նույնն անենք:

Հոգևոր պատերազմի այս աղոթքները և աստվածաշնչյան խոսքերն օրինակներ են, որոնք մենք կարող ենք որդեգրել և գործածել հատուկ իրավիճակներում, երբ մենք, կամ ինչ որ մեկը, որին մենք ճանաչում ենք, սատանայի հարձակման տակ է:

Աստծո սպառազինությունը

Եփեսացիս 6.13-17-ի հիման վրա

Իմանալով, որ մենք հոգևոր պատերազմի մեջ ենք, Աստված մեզ ապահովում է հոգևոր սպառազինությամբ և հանդերձավորում է, որպեսզի դեմ կանգնենք մեզ հանդիպով մարտերին:

> *«Ձեր վրա հագեք Աստգծո սպառազինությունը, որ կարողանաք ընդդիմանալ Սատանայի հնարքներին: Որովհետև մենք մարմնի ու արյան հետ չենք պատերազմում, այլ՝ իշխանությունների դեմ, զորությունների դեմ, այս աշխարհի խավարի իշխանների և բարձր տեղերում եղող հոգևոր չարության դեմ: Դրա համար սպառազինվե՛ք Աստծո ողջ սպառազինությամբ, որպեսզի չար օրում կարողանաք դիմադրել, և այս ամենը կատարելուց հետո, կանգնել: Ուստի կանգնեցե՛ք՝ ձեր մեջքերը ճշմարտությամբ գոտեպնդելով և արդարության զրահը հագնելով, ձեր ոտքերին հագեք խաղաղության ավետարանի պատրաստությունը. Եվ այս բոլորի վրա առեք հավատի վահանը, որով կկարողանաք հանգցնել Չարի կրակոտ նետերը: Եվ վերցրե՛ք փրկության սաղավարտը և Հոգու սուրը, որ Աստծո Խոսքն է. բոլոր աղոթքներով ու աղաչանքներով միշտ Հոգով աղոթելով ու, հենց այս բանում, բոլոր սրբերի համար կատարյալ հարատևությամբ և աղաչանքով արթուն՛ հսկեցեք»:*
> **Եփեսացիս 6.11-18**

Գիտակցիր, որ դու հոգևոր պատերազմի մեջ ես: Դավանիր քեզ տրված Աստծո պաշտպանությունը աղոթելով տարբեր զենքերի միջոցով, որ նկարագրված են Եփեսացիս 6-ում:

> **Աղոթք.**
> Շնորհակալ եմ, Տե՛ր, իմ փրկության համար: Ես դա նոր և թարմ ձևով եմ ընդունում Քեզնից և գիտեմ, որ ոչինչ չի կարող ինձ զրկել Քրիստոսի սիրուց և Քո թագավորության մեջ ունեցած իմ տեղից: Ես այսօր հագնում եմ Քո արդարությունն ընդդեմ բոլոր մեղադրանքների: Ծածկիր ինձ Քո սրբությամբ և պաշտպանիր իմ սիրտը բոլոր տեսակի հարձակումներից: Տե՛ր, ես կապում եմ ճշմարտության գոտին: Ես ընտրում եմ սուրբ կյանքը: Բացահայտիր բոլոր ստությունները, որոնց ես հավատում եմ և ցույց տուր ինձ Քո ճշմարտությունը: Ես որոշում եմ ամեն վայրկյան ապրել Ավետարանի համար: Ցույց տուր ինձ, թե ինչպես ես Դու գործում և առաջնորդիր ինձ դեպի Քո գործը: Ուժ տուր ինձ քայլել Քեզ հետ: Ես հավատում եմ, որ Դու հաղթական ես հակառակորդի ցանկացած ստության և հարձակման դեմ, և ես ընդունում ու դավանում եմ Քո զորությունն իմ կյանքում: Ինչ էլ որ դեմ լինի ինձ այսօր, չի կարող ինձ հաղթել, քանի որ Դու ինձ հետ ես: Ցույց տուր ինձ Աստծո Խոսքի ճշմարտությունը, որպեսզի կարողանամ դեմ կանգնել հակառակորդի հնարքներին: Հիշեցրու ինձ Քո Խոսքն այսօր: Ես համաձայն եմ ամեն բանում քայլ առ քայլ Քեզ հետ գնալ, քանի որ իմ հոգին հաղորդակից է Քո Հոգուն այսօր:

Պատերազմի զենքերը

Բ Կորնթացիս 10.4-5-ի հիման վրա

Երբ մենք գիտակցում ենք, որ հոգևոր պատերազմի մեջ ենք, կարող ենք ժրաջանորեն աղոթել դրա համար: Աստված մեզ հաղթություն և զորություն է պարգևել պատերազմելու Հիսուսի արյունով:

«Քանի որ մեր պատերազմի զենքերը մարմնավոր չեն, այլ Աստծով հզոր՝ ամրություններ խորտակելու համար, խորտակելով առարկություններն ու Աստծո գիտության դեմ գոռոզացած ամեն մի բարձր բան, և ամեն միտք գերելով՝ հնազանդեցնում ենք Քրիստոսին»:
Բ Կորնթացիս 10.4-5

Դու կարող ես հրամայել ցանկացած բանի, որ դեմ է դուրս գալիս Աստծո ճշմարտությանն ու Նրա Խոսքին, և հնազանդեցնել դա Հիսուսի անվանը: Համարձակ եղիր, աղոթիր կոնկրետ և վստահաբար, Աստծո զորությամբ և Նրա Հոգով:

Աղոթք.

Հա՛յր, Քո Խոսքն ասում է, որ իմ դեմ պատրաստված ոչ մի զենք չի հաջողվի (Եսայի 54.17), և ես դա հռչակում եմ Հիսուսի անունով: Քո Խոսքն ասում է, որ նեղությունը երկրորդ անգամ չի պատահի (Նավում 1.9): Եվ ես Հիսուսի անունով հռչակում եմ, որ սատանան չի կարող ինձ նորից գցել նեղության մեջ, ինչպես նախկինում: Ես Հիսուսի անունով հռչակում եմ, որ Քեզ վստահելով, իմ այս աղոթքները կպատասխանվեն և լուծում կգտնեն: Հակառակորդը վռնդված է իմ մոտից. իմ տնից, աշխատավայրից, եկեղեցական ընտանիքից, երեխաներից և հարազատներից: Ես հռչակում եմ, որ նա չի կարող ինձ դեմ կանգնել: Իմ դեմ ստեղծված ոչ մի զենք հաջողության չի հասնի, որովհետև Տիրոջ Հոգին ինձ հետ է և պաշտպանում է ինձ: Ես այս ճշմարտությունները հռչակում եմ Հիսուսի անունով: Այն ամեն բաները, որ դեմ են դուրս գալիս ինձ ու իմ ընտանիքին և Աստծո ճշմարտության ու կամքի համեմատ չեն, ես հրամայում եմ, որ խոնարհվեն Հիսուսի զորավոր անվան առաջ: Հա՛յր Աստված, ես Քեզ եմ նվիրաբերում ողջ երախտագիտությունը, փառքը, պատիվն ու երկրպագությունը: Շնորհակալ եմ, որ սիրում ես ինձ, մաքրում ես ինձ և նպատակ ես տալիս ինձ:

Պաշտպանության աղոթք

Բ Թեսաղոնիկեցիս 3.3, Բ Կոնրթացիս 6.14-7.1, 10.3-5, Հռոմեացիս 12.1-2

Մենք հաճախ անհանգստանում ենք մեր ապահովության և պաշտպանության համար: Երբ մենք նման զգացողություն ենք ունենում, կարող ենք անմիջապես Աստծուն գալ աղոթքով, մեր սիրտը բացելով Նրա առաջ և հոգևոր պայքար մղելով՝ խնդրելով և դավանելով Նրա պաշտպանությունը մեր և մեր ընտանիքների համար Հիսուսի անունով:

«Բայց Տերը հավատարիմ է, Նա կհաստատի ձեզ և կպահի չարից»:
Բ Թեսաղոնիկեցիս 3.3

Կիսվիր քո մտքերով ու անհանգստություններով Աստծո հետ: Խնդրիր Նրանից Իր գերբնական պաշտպանությունը: Նա ասում է, որ կհրամայի Իր հրեշտակներին քեզ համար, որպեսզի պահպանեն քեզ քո բոլոր ճանապարհներում (Սաղմոս 91.11): Դավանիր այդ խոստումը և ամեն բան դիր Նրա ոտքերի տակ՝ վստահելով Նրա բարի ծրագրերին և Նրա զորությանը, որ կարող է պահպանել քեզ և քո սիրելիներին:

Աղոթք.

Աստվա՛ծ, ես խոնարհվում եմ Քո առաջ և երկրպագում Քեզ: Շնորհակալ եմ, որ ինձ համար ճանապարհ

ես պատրաստել Քո Որդու՝ Հիսուսի միջոցով: Ես Քեզ եմ հանձնում իմ անձը և իմ կյանքի բոլոր ասպարեզները: Ես իմ կյանքը նվիրաբերում եմ միակ ճշմարիտ ու կենդանի Աստծուն և մերժում եմ հակառակորդի ցանկացած միջամտություն իմ կյանքում: Ես որոշում եմ նորոգվել իմ մտքի նորոգությամբ: Ես մերժում եմ ցանկացած միտք, որ դեմ է Քրիստոսի գիտությանը: Ես աղոթում և շնորհակալություն եմ հայտնում առողջ մտքի համար, Քրիստոսի մտքի համար: Ես ամեն օր պաշտպանություն եմ խնդրում իմ ընտանիքի և սիրելիների համար. ընտանիքի բոլոր անդամների, բարեկամների, ընկերների, ծանոթների և ինձ համար: Ես պաշտպանություն եմ խնդրում մեր բոլոր ճանապարհների մեջ: Ես խնդրում եմ, որ Դու հոգ տանես մեր ֆինանսական կյանքի, ունեցվածքի, առողջության և անվտանգության համար (հստակություն մտցրու որքան ցանկանում ես): Այն ամենը, ինչ ես ունեմ, Քոնն է, ո՛վ Աստված, և ես հռչակում եմ, որ սատանան չի կարող դիպչել ինձ կամ այն ամենին, ինչ Դու տվել ես ինձ: Ես հանդիմանում եմ հակառակորդին և ասում, որ խոնարհվի Հիսուսի արյան առաջ, որ ծածկում է ինձ: Նա չի կարող վերցնել այն, ինչ Դու ես ինձ տվել, և մենք պաշտպանված ենք և օրհնված Քեզնով, ո՛վ Աստված, միայն Քեզնով:

Խոստովանության աղոթք

Հռոմեացիս 10.10, Հակոբոս 5.16, Ա Հովհաննես 1.7-9, 3.8 հիման վրա

Մեր մեղքը մեզ բաժանում է Աստծուց, բայց Հիսուսը ճանապարհ պատրաստեց Աստծո հետ վերամիավորվելու համար խաչի վրա մահանալով և ծածկելով մեր մեղքը: Երբ մենք ընդունում ենք փրկության պարգևը, խոստովանում ենք մեր մեղքը և, որպես քրիստոնյա, մեղքը խոստովանելն ու ապաշխարելը դառնում է մի բան, որ մենք շարունակում ենք անել: Երբ մաքրված ու ապաշխարած գալիս ենք Աստծո մոտ, Նա կարողանում է գործել մեր կյանքում և վերափոխել մեզ՝ ավելի նմանեցնելով Իրեն:

«Եթե խոստովանենք մեր մեղքերը, ապա Նա հավատարիմ ու արդար է՝ մեր մեղքերը մեզ ներելու և մեզ մեր բոլոր անիրավություններից մաքրելու համար»:
Ա Հովհաննես 1.9

Խոնարհությամբ, առանց դատապարտվելու կամ պատժվելու վախի անկեղծությամբ միշտ արի Աստծո մոտ՝ խոստովանելով քո մեղքերը: Անկախ այն բանից՝ քո մեղքը քեզ մեծ է թվում, թե փոքր, միևնույն է, այն մեղք է, և ազդում է Աստծո հետ քո փոխհարաբերության վրա: Դու Նրա ուշադրությունը գրավում ես, երբ խոստովանում ես քո մեղքն ու հրաժարվում դրանից, որպեսզի հետևես Աստծուն: Խոստովանելուց հետո ինքդ քեզ հիշեցրու և դավանիր Հիսուսի արյան զորությունը քո կյանքում, որ մաքրում և նորոգում է քեզ:

Աղոթք.

Տե՛ր Հիսուս, ես իմ մեղքերը խոստովանում եմ Քեզ: Ես ապաշխարում և հեռանում եմ դրանցից: Ես զղջում եմ իմ արած սխալների համար: Ես խոստովանում եմ, որ եղել են դեպքեր, որ պետք է ճիշտ անեի, սակայն չեմ արել: Ես այդ բոլորը դնում եմ Քո ոտքերի տակ: Ես իմ մտքերը, խոսքերը, արածներն ու չարածները Քեզ եմ բերում: Շնորհակալ եմ, Աստվա՛ծ, որ ներում ես ինձ և ճանապարհ ես պատրաստում Քո Որդու միջոցով: Հիսուս, ես հավատում եմ, որ Դու Աստծո Որդին ես: Դու խաչի վրա մահացար իմ մեղքերի համար և երրորդ օրը հարություն առար: Ես խոստովանում եմ իմ մեղքերն ու ապաշխարում: Ես ընդունում եմ Քո ներումը և խնդրում, որ մաքրես ինձ իմ մեղքերից: Շնորհակալ եմ ինձ ազատագրելու, փրկագնելու, սրբացնելու և նպատակ տալու համար:

Ներման աղոթք

Մատթեոս 6.14-15, Ղևտացիս 19.18 հիման վրա

Ներումը կարող է դժվար բան թվալ, բայց Աստված Սուրբ Գրքում հստակեցնում է, որ անհատույց ներում է մեզ, և մեզնից էլ ակնկալում է նույնն անել մյուսների հանդեպ:

«Քանի որ եթե դուք ներեք մարդկանց իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ պիտի ների: Իսկ եթե դուք չներեք մարդկանց իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձեզ չի ների ձեր հանցանքները»:
Մատթեոս 6.14-15

Աղոթք.

Տե՛ր, ես խոստովանություն ունեմ անելու: Ես չեմ սիրել մարդկանց ինչպես պետք է: Ես բարկացել եմ որոշ մարդկանց վրա և սրտանց չեմ ներել նրանց: Աստված, ես գիտեմ, որ Դու ինձ այնքան շատ ես ներել, և ես Քո օգնության կարիքն ունեմ Քեզ հետևելու և մարդկանց ներելու համար: Հավատով ես հիմա ներում եմ (տուր նրա անունը): Ես նաև ներում և ընդունում եմ ինքս ինձ, որովհետև Դու ինձ նոր մարդ ես դարձրել Հիսուսի անունով:

Հպարտության աղոթք

Առակաց 11.2, 16.18, 26.12, Ա Տիմոթեոս 3.6 հիման վրա

Աստվածաշունչը մեզ ասում է, որ հպարտությունը գալիս է կործանումից առաջ: Հպարտությունը կարող է լուրջ հարց դառնալ մեր կյանքում, սակայն մենք Հիսուսով կարողություն ունենք դրան հաղթելու:

«Երբ հպարտությունը գալիս է, հետո ամոթն է գալիս, բայց իմաստությունը խոնարհների հետ է»:
Առակաց 11.2

Խոնարհ լինելու համար պետք է հաղթենք հպարտությունը մեր կյանքում: Ինչպես մյուս մեղքերն ես խոստովանում, պարբերաբար խոստովանիր քո հպարտությունը Աստծուն: Հանձնիր դա Նրան և խնդրիր Նրա օգնությունը խոնարհության մեջ քայլելու համար, ազատ հպարտությունից ու ինքնահավանությունից: Եթե զգում ես, որ հպարտությունը լուրջ հարց է քո կյանքում և անհանգստացնում է քեզ, ամեն օր խոստովանիր այն և բեր Աստծո առաջ:

Աղոթք.

Հա՛յր Աստված, ես Քեզ եմ գալիս Հիսուսի անունով: Ես գիտեմ, որ հպարտությունը միայն հեռացնում է ինձ Քեզնից: Ես վայր եմ դնում այն ամենը, ինչ պատճառ է դառնում իմ սրտում հպարտություն ունենալու մարդկանց հետ շփվելիս: Օգնիր ինձ մյուսներին ինձնից բարձր դասելու: Խնդրում եմ ամեն օր ինձ հիշեցրու, որ ճշմարիտ խոնարհությունը ոչ թե իմ մասին վատ մտածելն է, այլ իմ մասին ավելի քիչ մտածելն է: Ես խոնարհվում եմ Քո առաջ և Քեզ եմ գալիս երեխայի պես:

Սերնդային կապանքի աղոթք

Ելից 20.4-6, 34.7, Թվոց 14.18, Բ Կորնթացիս 5.17, Հռոմեացիս 8.1, 12.1

Սերնդային կապանքն այն մեղքն է, որ կարող է անցնել սերնդից սերունդ: Լինի դա հպարտություն, կախյալություն, սեռական մեղք կամ մեկ ուրիշ բան, հոգևոր պայքարի միջոցով դու կարող ես հռչակել Հիսուսի անունը և կանգնեցնել այդ մեղքը, որպեսզի այն չանցնի քո ընտանիքի որևէ անդամի:

«Քեզ համար կուռք չշինես, կամ վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա, կամ երկրի խորքերում՝ ջրերում եղած որևէ բանի նմանությունը: Նրանց չերկրպագես և նրանց չծառայես, որովհետև Ես՝ Քո Տեր Աստվածը, նախանձոտ Աստված եմ, որ հատուցում եմ հայրերի անօրենությունը որդիների վրա՝ մինչև նրանց երրորդ կամ չորրորդ սերունդը, որ ատում են Ինձ: Եվ ողորմություն ցույց կտամ նրանց մինչև հազար սերունդը, որ սիրում են Ինձ և Իմ պատվիրանները պահում»:
Ելից 20.4-6

Եթե սերնդային կապանք ունես կյանքիդ մեջ, բեր դա Աստծո առաջ: Խնդրիր Նրա զորությունը, որպեսզի հաղթահարես այն մեղքը, որ սերնդե-սերունդ ազդել է քո ընտանիքի վրա: Ասա, որ այն հենց հիմա կանգ առնի և հանդիմանիր մեղքը կամ ցանկացած այլ բան, որ քեզ հեռացնում է Քրիստոսի հետ քո փոխհարաբերությունից: Աղոթիր, որ Աստված պաշտպանություն, բժշկություն և նոր ուղի շնորհի քեզ և քո ընտանիքին:

Աղոթք.

Հա՛յր Աստված, ես հասկանում եմ, որ իմ ընտանիքից որոշ հետևանքներ եմ ժառանգել, և Տեր Հիսուս Քրիստոսի անունով ես Քո զորությունն եմ հռչակում կոտրելու մտային կամ ֆիզիկական որևէ հիվանդություն, հպարտություն, կախյալություն կամ ցանկացած այլ բան իմ և իմ ընտանիքի կյանքում որպես հետևանք մեղքի, որ անցնում է ծնողներից, կամ նրանց ծնողներից, կամ ընտանիքի մյուս անդամներից: Ես հռչակում եմ, որ սերնդային բոլոր մեղքերը ավարտվում են հենց հիմա և այստեղ, և ես դրանք իմ ընտանիքում ոչ ոքի չեմ փոխանցելու: Շնորհակալ եմ, Տե՛ր, ինձ ազատելու և իմ ու իմ ընտանիքի համար նոր ուղի բացելու համար:

Բժշկության աղոթք

Ա Պետրոս 2.24, Սաղմոս 103.2-5, Ղուկաս 1.37 հիման վրա

Մեր Աստված հրաշքների Աստված է: Ինչպես մենք կարդում ենք Աստվածաշնչում, այնպես էլ այսօր մենք շարունակաբար տեսնում ենք Նրա բժշկության սքանչելի հրաշքները: Նա մեր Բժիշկն է, և մենք կարող ենք վստահաբար մոտենալ Նրան և բժշկություն խնդրել մեզ համար, կամ ինչ որ մեկի, ում ճանաչում ենք:

«Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ, ու մի՛ մոռանա Նրա բոլոր բարերարությունները, Ով ներում է քո բոլոր անօրենությունները, Ով բժշկում է քո բոլոր ախտերը, Ով փրկագնում է կյանքդ ապականությունից, և քեզ ողորմությամբ ու զորությամբ պսակում: Ով կշտացնում է սիրտդ բարությամբ այնպես, որ երիտասարդությունդ արծվի պես նորոգվում է»:
Սաղմոս 103.2-5

Հավատով Աստծուց բժշկություն խնդրիր: Դավանիր Նրա զորությունն ու բարությունը, հավատալով ու վստահելով Նրան, որ հոգ է տանում քեզ համար և նրանց, ում համար դու աղոթում ես, որ բժշկվեն:

Աղոթք.

Հա՛յր, Հիսուսի անունով ես գալիս եմ Քո առջև բժշկություն խնդրելու (նշիր քեզ կամ մեկ ուրիշին, ում համար դու բժշկություն ես խնդրում): Իմ հույսը Քեզ վրա է, որպես իմ Բժիշկ: Ես հավատում եմ, որ Դու կարող ես դա անել: Քո անունը Եհովա Ռաֆա է՝ Աստված, որ բժշկում է, և ես հավատում եմ, որ բոլոր ծնկերը պիտի խոնարհվեն Քո առջև, ներառյալ (նշիր հիվանդությունը կամ տկարությունը): Շնորհակալ եմ, Հիսուս, որ մահացար խաչի վրա, որպեսզի մենք կարողանանք բժշկվել: Դու ասում ես, որ ներում ես մեր մեղքերը և բժշկում մեր հիվանդությունները, և ես փառավորում եմ Քեզ դրա համար: Շնորհակալ եմ, որ Հիսուսին հարություն տվող Հոգին բնակվում է իմ մեջ: Քեզ համար անհնարին բան չկա, Աստվա՛ծ: Աստվա՛ծ, գործիր մեր կյանքում և տուր մեզ խաղաղություն և առաջնորդություն:

Ամուսնության աղոթք

Եփեսացիս 5.25-30 հիման վրա

Աստված է ստեղծել ամուսնությունը, և Նրա ծրագիրը դրա համար բարի է: Ամուսնության մեջ, ինչպես մարդկային մյուս բոլոր փոխհարաբերությունների մեջ, մենք պետք է ջանք անենք, որպեսզի սիրենք՝ ինչպես պետք է: Մենք չենք կարող այդ հարցում հաջողության հասնել մեր սեփական կարողությամբ: Մենք Աստծո կարիքն ունենք, որ ինքնին սեր է, որպեսզի մեզ տա Իր Սուրբ Հոգին և առաջնորդի մեզ ամուսնության մեջ: Ամուսնությունը Հիսուս Քրիստոսի և Նրա հարսնացուի՝ եկեղեցու օրինակն է: Որպես քրիստոնյա ամուսին և կին՝ մենք մեծ պատիվ ունենք միմյանց հանդեպ ունեցած մեր սիրով ու նվիրվածությամբ ներկայացնելու եկեղեցու հանդեպ Քրիստոսի սերն ու նվիրվածությունը:

> *«Ամուսիննե՛ր, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և Իր անձը տվեց նրա համար, որ նրան սրբի և մաքրի ավազանի ջրով՝ խոսքով, որպեսզի այն Իր առջև ներկայացնի որպես փառավոր եկեղեցի՝ առանց արատի, խորշոմի, կամ այլ թերության, այլ սուրբ և անարատ լինի: Այդպես էլ ամուսինները պետք է սիրեն իրենց կանանց, ինչպես իրենց մարմինները: Ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում: Որովհետև ոչ մեկն իր մարմինը չի ատում, այլ սնում և խնամում է այն, ինչպես Տերն էլ՝ եկեղեցին»:*
> **Եփեսացիս 5.25-30**

Շնորհակալություն հայտնիր Աստծուն քո ամուսնության համար: Սկսիր Նրան խնդրել, որ օգնի քեզ լինել լավագույն կողակիցը, որ հնարավոր է: Խնդրիր Նրան, որ քեզ օգնի շատ սիրելու և քո կողակցին տեսնելու այնպիսին, ինչպիսին Տերն է տեսնում նրան: Այնուհետև աղոթիր քո ամուսնության համար՝ խնդրելով Աստծուն օգտագործել քո ամուսնությունն աշխարհի վրա ազդելու և Աստծո փառքի համար: Տիրոջից ֆիզիկական, հոգևոր և զգացմունքային պաշտպանություն խնդրիր: Աղոթիր քո ամուսնական միաբանության համար և աստվածային իմաստություն խնդրիր, թե ինչպես ապրեք ձեր կյանքը որպես մեկ: Տիրոջ առջև բեր այն ամենը, ինչ քո ամուսնության մեջ անհանգստացնում է քեզ, և վստահիր Տիրոջը, որ կարող է գործել ձեզ համար:

Աղոթք.

Շնորհակալ եմ, Աստվա՛ծ, ինձ սիրելու համար, և ամուսնությունը որպես երկրի վրա մեր հանդեպ Քո սիրո օրինակ ստեղծելու համար: Օգնիր ինձ, Աստվա՛ծ, սիրելու իմ կողակցին (տուր նրա անունը) այնպես, ինչպես Դու ես սիրում ինձ: Օգնիր ինձ լսել ու պատվել իմ կողակցին և նրան ինձնից առաջ դնել: Պաշտպանիր մեզ ֆիզիկապես, մտավորապես և հոգևորապես: Մենք խնդրում ենք, որ մեր մեջ ավելի խորը միություն ստեղծես և մեզ ավելի ուժեղ զույգ դարձնես, ավելի նվիրված մեկս մյուսի և Քո հանդեպ: Օգտագործիր մեզ, Աստվա՛ծ, դարձրու մեզ օրինակ այն բանի, թե ինչպիսին պետք է լինի հոգևոր ընտանիքը: Գործածիր մեզ ավելի անելու միասին, քան մենք կարող էինք անել առանձին:

Մենք խնդրում ենք, որ մեզ ավելի ազդեցիկ դարձնես, որպեսզի ավելի մեծ ազդեցություն թողնենք մեր շրջապատի մարդկանց վրա: Մենք խնդրում ենք, որ մեր միջոցով ներգործես մեր ընկերների, ընտանիքի և հեռու գտնվողների կյանքում: Լցրու մեզ Քո Սուրբ Հոգով և շարժվիր մեր միջոցով՝ մոտեցնելու Քեզ նրանց, որ հեռու են, որպեսզի նրանք էլ հանդիպեն կենդանի Աստծո հետ, որ փնտրում ու փրկում է կորածին և ազատագրելով տալիս է նպատակ:

Մենք, որպես զույգ, որոշում ենք առաջինը սիրել Քեզ, Աստվա՛ծ: Մենք Քեզ հետ մեր փոխհարաբերությունը դնում ենք ամեն բանից առաջ: Մենք խոստովանում ենք, որ Քո կարիքն ունենք: Շնորհակալ ենք, որ մեզ մեկացրել ես: Մենք որոշում ենք իրար շատ սիրել այսօր և ամեն օր: Շնորհակալ ենք մեր ամուսնության համար: Մենք խնդրում ենք, որ օրհնես այն, կառուցես այն և միշտ ներկա լինես մեր մեջ:

ԱՂՈԹԵԼ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԱՍՏԾՈ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՆ

Աստված ուզում է, որ բոլորը Նրան ճանաչեն: Նա Իր Խոսքում ասում է, որ պատրաստ է թողնել 99-ը և գնալ 1-ի հետևից, որ Իրեն չի ճանաչում: Որպես Քրիստոսի հետևորդ, մենք կանչված ենք համագործակցել Քրիստոսի հետ և աղոթել նրանց համար, ովքեր չեն ճանաչում Նրան, որպեսզի ճանաչեն:

Խնդրիր Հորը նրանց բերելու Հիսուսի մոտ

Աստված մարդկանց բերում է Հիսուսի մոտ: Դա մի բան չէ, որ կարող ենք անել մեր ջանքով, այնպես որ պետք է հավատարիմ լինենք աղոթքի մեջ, որպեսզի Հայրը Հիսուսի մոտ բերի նրանց, ում դրել է մեր սրտում, որ աղոթենք:

> *«Ոչ մեկը չի կարող Ինձ գալ, եթե հայրը, որ Ինձ ուղարկեց, նրան չձգի…»:*
> **Հովհաննես 6.44**

Մտածիր մարդկանց մասին, որոնց դու գիտես, որ Աստծուց հեռու են: Թող քո սիրտը բաց լինի Աստծո առաջ, որպեսզի Նա կարողանա ցանկացած մեկին հիշեցնել քեզ:

> **Աղոթք.**
> Հա՛յր, ես աղոթում եմ իմ շուրջ եղած մարդկանց համար (տուր կոնկրետ անուններ), որ Դու գերբնական կերպով նրանց սրտերը մոտեցնես Քեզ: Ուղարկիր Քո Սուրբ Հոգին նրանց կյանքի մեջ և նրանց մեջ փափագ առաջացրու իրենց կյանքը տալու Քեզ: Թող նրանք խորը գիտակցություն ունենան, որ կյանքում ավելիի կարիքն ունեն, քանի որ միայն դու կարող ես հագեցնել նրանց հոգևոր ծարավը: Բա՛ց նրանց ականջները՝ լսելու Քո ձայնը:

Կապիր այն ոգուն, որ կուրացնում է նրանց միտքը

Ճշմարտությունը կարող է լինել մարդկանց աչքի առաջ, բայցևայնպես նրանք չեն կարողանում դա տեսնել, քանի որ ինչ որ բան խանգարում է նրանց տեսնել Աստծուն:

> *«Որոնց մեջ այս դարի աստվածը կուրացրեց չհավատացողների մտքերը, որպեսզի Քրիստոսի փառավոր ավետարանի լույսը չծագի նրանց վրա, Քրիստոսի, որ պատկերն է Աստծո»:*
> **Բ Կորնթացիս 4.4**

Մենք կարող ենք աղոթել ցանկացած արգելքի հեռացման համար նրանց կյանքում, որպեսզի տեսնեն Աստծո լույսը: Մենք կարող ենք աղոթել, որպեսզի նրանք տեսնեն Աստծո լույսը: Մենք կարող ենք աղոթել, որպեսզի նրանք տեսնեն ճշմարտությունը առանց արգելքների կամ շեղումների:

> **Աղոթք.**
> Հա՛յր, կապիր չար ոգուն, որ կուրացնում է իմ շրջապատի մարդկանց միտքը: Հիսուսի անունով ես աղոթում եմ, որ նրանք կարողանան պարզորոշ տեսնել ու ճանաչել Քեզ և իրենց սիրտը հանձնել Քեզ: Վերացրու բոլոր արգելքները, որ հակառակորդն օգտագործում է նրանց Քո ճշմարտությունից շեղելու համար: Բացիր նրանց աչքերը, Տե՛ր, որպեսզի նրանք տեսնեն Հիսուսին:

Աղոթիր, որպեսզի նրանք անձնական հաղորդակցություն ունենան Աստծո հետ

Շատերը մտածում են, որ քրիստոնեությունը սովորական մի կրոն է: Նրանք Աստծուն տեսնում են միայն կազմակերպության կամ եկեղեցու կառուցվածքի միջոցով: Նրանք, հնարավոր է, սրտնեղված, բարկացած կամ իրենց դավաճանված են զգում այն մարդկանց պատճառով, որոնց հանդիպել են եկեղեցում, կամ կրոնավոր օրինապաշտների և նրանց կեղծավորության պատճառով: Սակայն Աստված չեկավ կազմակերպություն ստեղծելու: Նա եկավ հաղորդակցություն ունենալու Իր զավակների հետ:

«Որովհետև դուք կապանքի հոգի չստացաք, որ նորից վախի մեջ լինեք, այլ դուք որդեգրության Հոգին ստացաք, որով մենք աղաղակում ենք՝ Աբբա՛, Հա՛յր»:
Հռոմեացիս 8.15

Աստված ուզում է, որ Իր սիրելի որդիներն ու դուստրերը տուն վերադառնան: Մարդկանց համար աղոթելը, որպեսզի նրանք անձնական հանդիպում ունենան կենդանի Աստծո հետ, հսկայական փոփոխություն է բերում:

Աղոթք.

Հա՛յր, ես աղոթում եմ, որ մարդիկ հասկանան, թե որքան շատ ես նրանց սիրում: Տարածիր որդեգրության Հոգին իմ շրջապատի մարդկանց կյանքում, որպեսզի նրանք իմաստալից հաղորդակցության մեջ մտնեն Քեզ հետ: Նրանց սրտի մեջ խորը փափագ առաջացրու՝ տուն վերադառնալու, Քո ձայնը լսելու և տեսնելու, որ գրկաբաց սպասում ես նրանց: Թող նրանք իմանան, որ Դու միշտ պատրաստ ես վազելու և ամուր գրկելու նրանց:

Աղոթիր հավատացյալների համար, որպեսզի նրանց ուղիները խաչվեն

Սա երկպատիկ է. մենք կարող ենք աղոթել մյուս հավատացյալների համար, որպեսզի նրանք դրական ազդեցություն ունենանան իրենց շրջապատի մարդկանց վրա, ինչպես նաև մենք կարող ենք հնարավորություններ փնտրել, թե ինչպես ինքներս կարող ենք դրական ազդեցություն թողնել մեր շրջապատի վրա: Մարդկանց հասնելու Աստծո գործը կատարվում է Աստծուն ճանաչող և սիրող մարդկանց միջոցով: Հիսուսը մեզ ասում է, որ աղոթենք մարդկանց համար, որպեսզի նրանք գնան և աշխարհի մեջ աղ ու լույս լինեն: Հիսուսը եկավ Ավետարանի բարի լուրը բերելու բոլոր մարդկանց, և Նրա փափագն է, որ բոլորը ճանաչեն Նրան և սիրեն Նրան:

«Աղաչեցե՛ք հնձի Տիրոջը, որ մշակներ ուղարկի Իր հնձի համար»:
Մատթեոս 9.38

Որպես Նրա հոգևոր մշակներ, մենք պետք է ճիշտ օգտագործենք հնարավորությունը՝ հոգևոր սերմեր ցանելու մարդկանց սրտում, որոնց ամեն օր հանդիպում ենք: Մենք, հնարավոր է, տեղյակ չլինենք, թե ովքեր են նրանց համար արդեն աղոթում, սակայն մեր բարի խոսքը, կարեկցանքի քայլը կամ սիրո վերաբերմունքը կարող է վերջնական ազդեցություն ունենալ նրանց՝ Քրիստոսին բերելու հարցում:

Աղոթք.

Հա՛յր, ես աղոթում եմ իմ շուրջ եղած կորսվածների համար, որպեսզի նրանք հանդիպեն հավատացյալների հետ, ովքեր կարող են դրական ներգործություն ունենալ նրանց վրա: Տե՛ր, թող իմ կյանքն այնպես փայլի, որ մարդիկ ցանկանան ճանաչել այն Աստծուն որին ես ծառայում եմ: Օգնիր մարդկանց տեսնել իմ անկեղծ սերն ու անհանգստությունը նրանց հանդեպ իմ խոսքերի և արարքների մեջ: Թող որ ես լինեմ Քո ձեռքն ու ոտքը՝ ծառայելու նրանց և թող որ նրանք իրոք իմանան, թե որքան ես Դու նրանց սիրում:

Արձակիր իմաստության և հայտնության հոգին նրանց համար, որպեսզի նրանք Աստծուն ավելի լավ ճանաչեն

Դա այն պահն է, երբ հանկարծ մարդու միտքը պայծառանում կամ լուսավորվում է: Այս տեսակ հայտնություն ունենալու ամենակարևոր պահն այն է, երբ հոգևոր լույսն է ճառագում նրանց մեջ: Մարդիկ պետք է տեսնեն իրենց սեփական մեղքը, տեսնեն, թե ինչ արեց Հիսուսը խաչի վրա, և տեսնեն այն հույսը, որ գալիս է՝ իրենց կյանքն Աստծուն տալու հետևանքով:

> *«Չեմ դադարում ձեզ համար գոհանալուց, ձեզ իմ աղոթքների մեջ հիշելով, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածը, փառքի Հայրը, ձեզ իմաստության և հայտնության հոգի տա Իրեն ճանաչելու համար»:*
> **Եփեսացիս 1.16-17**

Մարդիկ իմաստության կարիք ունեն, ոչ թե ընդամենը գիտության, այլ հոգևոր բաների ընկալման, թե ինչպես են դրանք ուղղակիորեն ազդում իրենց վրա: Մենք կարող ենք աղոթել այս տեսակ գերբնական հայտնության համար, որ միայն Աստծուց է գալիս:

> **Աղոթք.**
> Հա՛յր, ես աղոթում եմ իմ շրջապատի մարդկանց համար, որպեսզի նրանք ունենան իմաստության և հայտնության հոգին: Ես աղոթում եմ, որ նրանք ճշմարտապես հասկանան իրենց հոգևոր իրավիճակը և տեսնեն, թե ինչ արեց Հիսուսը նրանց համար խաչի վրա: Օգնիր նրանց ունենալ այն տեղեկությունն ու փորձառությունը, որի կարիքն ունեն՝ Քեզ մոտենալու համար, որպեսզի հասկանան այն ամենը, ինչ Դու ունես նրանց համար:

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Աստված նպատակով է մեզ դրել երկրի վրա այս հատուկ ժամանակի մեջ: Գործք 17.26-ն ասում է, որ Նա է որոշում, թե երբ և որտեղ մենք կապրենք: Իմանալով սա՝ մենք կարող ենք նայել մեր շրջապատի մարդկանց, որ այս հատուկ ժամանակի մեջ մեր կողքին են, և անձնական պատասխանատվություն ստանձնենք նրանց համար աղոթելու:

> *«Ուստի աղաչում եմ, ամեն բանից առաջ աղերսանք, աղոթք, բարեխոսություն և գոհություն մատուցել բոլոր մարդկանց համար, հատկապես՝ թագավորների և բոլոր նրանց համար, որ իշխանության մեջ են, որպեսզի խաղաղ ու հանդարտ կյանք վարենք, աստվածպաշտությամբ և անկեղծությամբ: Քանի որ սա է բարին ու ընդունելին մեր Փրկիչ Աստծո առջև. Ով կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և ճշմարտության գիտության ճանաչմանը հասնեն»:*
> **Ա Տիմոթեոս 2.1-4**

Աղոթիր իշխանավորների համար և նրանց, որ քո իշխանության ներքո են: Աղոթիր քո ընտանիքի անդամների և քո ազդեցության շրջանակում եղողների համար (ցանկացած մեկը, որի հետ դու կապ ունես): Գրի առ կոնկրետ մարդկանց անուններ և աղոթիր նրանց համար:

Իմ կառավարությունը

Նախագահ _____

Ազգային առաջնորդներ _____

Նահանգային (մարզային) առաջնորդներ _____

Քաղաքային առաջնորդներ _____

Իմ ընտանիքը

Կողակից _____

Երեխաներ _____

_____

Ծնողներ _____

Քույր, եղբայր _____

_____

Ընտանիքի մյուս անդամներ _____

_____

Իմ եկեղեցին

Հովիվ _____

Խմբի պատասխանատու _____

Խմբի անդամներ _____

_____

Իմ կյանքը

Գործատու _____

Գործընկերներ _____

_____

Աշխատողներ _____

_____

Ուսուցիչներ/Դասախոսներ _____

_____

Մտերիմ ընկերներ _____

_____

Աստծո կարիքն ունեցողներ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Աղոթքի օրագիր

Աղոթքի օրագիր

Մի բան է՝ իմանալ Աստծո մասին, մեկ ուրիշ՝ ճանաչված լինել Աստծո կողմից: Աղոթքն ու ծոմապահությունը հզոր միջոց են՝ պատրաստվելու, որպեսզի ընդունենք Նրա ներկայությունը և այն ամենը, ինչ Նա ծրագրել է մեր կյանքի համար, ինչպես նաև ավելի խորը աճելու Նրա հետ քայլելու մեջ, ինչպես որ դավանում ենք. «Ավելի շատ Դու, և ավելի քիչ՝ ես»:

Հարցրու ինքդ քեզ. «Ի՞նչ եմ ես թույլ տալիս, որ մտնի իմ և Աստծո ներկայության միջև»: Պատկերացրու այն օրհնությունները, որ նա ունի քեզ համար, երբ դու պատրաստում ես քո սիրտն ու լիովին հանձնվում Նրան:

Ի՞նչ է ծոմապահությունը

Ծոմապահությունը որոշակի ժամանակ ուտելուց/խմելուց կամավոր կերպով հրաժարվելն է: «Ուտելը» կամ «խմելը» կարող է լինել ցանկացած բան, որ քեզ խանգարում է առաջ գնալ: Ի՞նչ ես դու «օգտագործում» որպես հասարակական սնունդ, գաղափարական սնունդ, հոգևոր սնունդ և զգացմունքային սնունդ: Այդ բաները քեզ շեղու՞մ են Աստծո հետ քո փոխհարաբերությունից:

Դու ապավինո՞ւմ ես այնպիսի բաների, որոնք Աստծո հետ ոչ մի կապ չունեն, որպեսզի օրդ լավ անցնի: Դու կարող ես նույնիսկ չգիտակցել, որ կախյալություն ունես: Օրինակ, եթե դու ամեն օր «պարտադիր» սուրճ ես խմում, և չես կարողանում դա թողնել, ուրեմն՝ կախյալություն ունես: Գուցե քո ծոմապահությունը պետք է ընդամենը լինի սուրճից հրաժարվելը: Հարցրու Աստծուն, և Նա ցույց կտա:

Ֆիզիկական ծոմապահությունից առաջ պետք է խորհրդակցել բժշկի հետ: Եթե դու առողջական խնդիրներ ունես, մտածիր հեռուստացույցից կամ լրատվամիջոցներից ծոմ պահելու մասին: Իմաստն այն է, որ գուցե կան բաներ, որ Աստված ուզում է 3 շաբաթով քեզնից հեռացնել, որպեսզի Նրան ավելի հստակ տեսնես: Ինքդ քեզ մի խաբիր քեզ ամբողջովին զատելով ծոմապահությունից:

Ծոմ պահելու նպատակը. անձնական հանդիպում կենդանի Աստծո հետ

«Նա պետք է մեծանա, բայց ես պետք է փոքրանամ»: Հովհաննես 3.30
«Սուրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ»: Ա Պետրոս 1.16

Դու կարող ես ծոմապահությունից բազմաթիվ օգուտներ ունենալ (մարմնի մաքրազատվելը, որևէ կախյալությունից ազատագրվելը և այլն), սակայն ծոմապահության նպատակն Աստծուն վայելելն է: Այս պահին քո կյանքը, հնարավոր է, միայն քեզ է ուղղված՝ ինչ ես դու ուզում, և երբ ես դու ուզում: Պատկերացրու, որ դու քեզ զատես քո ցանկալի կարիքներից (օրինակ՝ սնունդը)… կտեսնես, որ կյանքն ամբողջությամբ Նրան է ուղղված:

Աստվածաշնչյան օրինակներ ծոմապահության մասին

Հատուկ հայտնություն. Ելից 34.27-28
Պատերազմի ժամանակ. Դատավորաց 20.26
Քաջություն և իմաստություն. Եսթեր 4.3,16
Վշտի ժամանակ. Նեեմիա 1.4, Բ Թագավորաց 1.12, Ա Թագավորաց 31.13, Ա Մնացորդաց 10.12
Հոգևոր վերականգնում. Գ Թագավորաց 19.1-9
Սուգ. Դանիել 10.1-3
Ապաշխարություն. Հովնան 3.5, Դանիել 6.18
Ծառայության նախապատրաստություն. Մատթեոս 4.2
Հոգևոր զորություն. Մարկոս 9.29
Ծառայության ուղարկում. Գործք 14.23
Անձը զատել սրբության համար. Ա Կորնթացիս 7.5
Հոգևոր դաստիարակություն. Ա Կորնթացիս 11.24-28 (Պողոսը «հաճախ ծոմ էր պահում»)

Ծոմապահության նախապատրաստություն

Պատրաստիր սիրտդ.

Բ Մնացորդաց 7.14-ում Աստված հայտնվում է Սողոմոնին և բացատրում, որ երբ Իր ժողովուրդն անցնում է դժվարին ժամանակներով, նրանք պետք է փնտրեն Աստծուն և հետևեն Նրա ճանապարհներին: Այդ ժամանակ Նա կլսի նրանց աղոթքներն ու կբժշկի նրանց:

Պատրաստակամ եղիր լսել, թե ինչ է Աստված ասում, որ կարիք կա փոխելու, և պատրաստակամ եղիր փոխելու դրանք: Դադարիր մեղք գործել: Որո՞նք ենք այն ճանապարհները, որոնցով Նա ուզում է, որ դու քայլես: Որքա՞ն է Նա ուզում, որ դու աղոթես ու կարդաս Նրա Խոսքը: Ասա Աստծուն, որ դու քո կյանքը հանձնում ես Նրան, և որ դու ուզում ես ավելի շատ ունենալ Նրան ու Նրա ճանապարհները քո կյանքում:

Նախապատրաստիր քո դրդապատճառները.

Եփեսացիս 1.3-ն ասում է, որ կան մեզ տրված հոգևոր օրհնություններ: Մենք երբեք չենք կարող սպառել դրանք: Ո՞վ գիտի, թե ինչ է Աստված ուզում քեզ տալ, կամ քեզ ցույց տալ: Գուցե Նա ուզում է քեզ շնորհել այնպիսի պարգևներ, ինչպիսին են՝ իմաստությունը, օծությունը, աղոթքի զորությունը, բժշկության զորությունը, ուսուցման զորությունը, ուրախությունը, կամ քաջալերանքը: Երբ դու հեռացնում ես այն բաները, որ քեզ խանգարում են կենտրոնանալ Աստծո վրա, Նա ի վիճակի է լինում քեզ ցույց տալ քո կյանքի վերաբերյալ բաներ, որոնք դու չգիտեիր:

Նախապատրաստիր քո մարմինը.

Եթ դու որոշես քո ծոմապահության ժամանակ միայն միրգ ու բանջարեղեն ուտել, դա կմաքրազատի քո մարմինը: Հնարավոր է՝ դու թուլություն զգաս, երբ օրգանիզմդ թունազրկվի, բայց դու կարող ես դա հաղթահարել: Սա մտքի խաղ չէ՝ տեսնելու, թե արդյոք կարո՞ղ ես գոյատևել քիչ ուտելով, նորություններ կամ սպորտ քիչ դիտելով: այս ամենն Աստծուն վայելելու մասին է: Որոշ մարդիկ հարցնում են. «Չուտելն ի՞նչ կապ ունի Աստծո հետ իմ փոխհարաբերության հետ»:

Նախապատրաստիր քո ժամանակացույցը.

Որոշիր, թե երբ ես հանդիպելու Աստծո հետ, երբ և ինչ ես ուտելու, և ինչպես ես ժամանակդ այլ կերպ անցկացնելու: Հիշի՛ր, ծոմապահությունն Աստծո հետ հաղորդակցվելու մասին է, այնպես որ ժամանակդ մի՛ լցրու այնպիսի բաներով, որոնք քեզ կշեղեն քաղց զգալուց:

Ծոմ պահելու ուղեցույց.

- Նախօրոք ընտանիքիդ բացատրիր, թե ինչ ես դու անում:
- Խնդրիր, որ քեզ հնարավորություն տան միայնակ լինելու:
- Խնդրիր նրանց չքննարկել դա քեզ հետ՝ նախքան դու կավարտես ծոմ պահելը:
- Ոչ մի անգամ մի՛ բողոքիր կամ պարծեցիր քո ծոմապահության համար, և խուսափիր խոսել դրա մասին:
- Գտիր մեկին, ում կարող ես հաշվետու լինել, որպեսզի աղոթի ու քաջալերի քեզ:
- Հեռու մնա բացասական մարդկանցից:
- Որքան հնարավոր է՝ շատ ժամանակ անցկացրու մենության մեջ՝ առանձնության և աղոթքի համար:
- Գիտակցիր, որ քո հին մարդը չի կարող վերադաստիարակվել, այլ պետք է խաչվի:
- Օրագրիդ մեջ նշումներ արա, երբ աղոթում ու հանդիպում ես ունենում Տիրոջ հետ: Գրի առ հրաշքները, որ Աստված անում է քո կյանքում:

Ծոմապահության տեսակներ

Լիակատար ծոմ

• Խմել միայն հեղուկներ, սովորաբար ջուր և/կամ թույլ հյութեր:
• Որպես տարբերակ կարելի է օգտագործել արգանակ կամ ապուր:

Ընտրողական ծոմ

• Բացառել որոշ բաներ քո սննդակարգից:
• Դանիելի ծոմը. բացառել միսը, քաղցրեղենը կամ հացը, խմել միայն ջուր կամ հյութ, և ուտել տարատեսակ միրգ և բանջարեղեն:

Անձի ծոմ

• Ընդհանուր՝ նրանց համար, ովքեր նոր են սկսում սննդային ծոմ պահել, նրանց համար, ովքեր առողջական խնդիրներ ունեն, որոնք խանգարում են նրանց սննդային ծոմ պահել, և նրանց համար, ովքեր ուզում են վերակենտրոնացնել իրենց կյանքի որոշակի ասպարեզներ, որոնք հավասարակշռությունից դուրս են եկել:
• Խորհուրդներ. հեռու մնացեք սոցիալական ցանցերում ներգրավվելուց, խանութներում շրջելուց, հեռուստացույց դիտելուց և այլն:

Պահպանեք ձեր ծոմը

Հարցն «ուտել, թե չուտել»-ը չէ

Երբ դու շարունակում ես ծոմ պահել, տեսնում ես, որ սովածության ցավեր չես զգում, որ քեզ թվում էր, պետք է ունենայիր: Առանց սնունդի համար անհանգստանալու՝ դու կզարմանաս, որ կարողանում ես օրեր շարունակ ապրել առանց ուտելու և քո ժամանակն օգտագործել Հիսուսին ավելի ջերմեռանդորեն փնտրելու համար: Ոչ մի հրաշագործ բան չկա այն բանի մեջ, որ հանուն հոգևորության բաց ես թողնում ուտելու հնարավորությունը: Կարևորը հիշելն է, որ պետք է լսես, թե ինչ է Աստված ասում, և հնազանդվես այն ամենին, ինչ լսում ես:

Աղոթքի կյանքը ծոմապահության ժամանակ

Կա մի հարց, որին պետք է պատասխանես: Երբ դու ծոմ պահես, կփնտրե՞ս Նրան, կտա՞ս Նրան լսող ականջ և որակով ժամանակ, որին Նա արժանի է: Նա շարունակաբար քեզ կզատի աշխարհի կախվածությունից: Հետևաբար, Նրա հետ անցկացրած քո ժամանակը կարող է դառնալ ավելի հաճախակի, քան դու սկզբում ծրագրել էիր, և նույնիսկ կարիք չկա ասելու, որ քո աղոթքի կյանքը մեծապես կբարելավվի:

Որքան տեղին է նշել, որ Հիսուսն ու Մովսեսն անապատում հագեցած ժամանակ էին անցկացնում Աստծո հետ մենակության մեջ: Հետաքրքիր է, որ եբրայերեն անապատ բառը, որ madbar-ն է, ունի «խոսել» իմաստը: Օրվա ընթացքում դու հզոր կերպով կլսես Նրա ձայնը: Իմաստությունը դեպի քեզ կաղաղակի փողոցներում: Ինչպես աստղերն են երկնքում պատմում Աստծո փառքը, այնպես էլ ցանկացած բան քո պատրաստակամ հոգուն կբացահայտի Նրա Թագավորության խորհուրդները, որ ծածկված են այս աշխարհի իշխաններից (Առակաց 8.1-3, Սաղմոս 19, Ա Կորնթացիս 2.7): Դու կլսես Նրան, երբ մեքենա ես վարում, հեռախոսով ես խոսում կամ ընկերոջդ հետ ինչ-որ բան ես քննարկում: Ակնկալիր, որ լսելու ես Նրա ձայնը ուժեղ և հստակ կերպով:

Պատերազմել կասկածների դեմ և պատերազմել բարի պատերազմը

Ծոմապահության ընթացքում քո մեծագույն թշնամիներից մեկը կլինեն քո միտքն ու հիշողությունը: Քո միտքն ու զգացմունքները մշտապես գործում են, որպեսզի միասին կարգ ու կանոն բերեն քո աշխարհում. կարգ ու կանոն ըստ քո իմացածի, թե ինչպիսին այն պետք է լինի: Օրվա որոշակի ժամերին ուտելը միշտ եղել է քո կյանքի սովորության մի մասը: Ծոմապահությունը ոչ մի իմաստ չի ունենա քո մտքի համար:

Մատթեոս 14.22-23-ում, երբ Պետրոսը քայլում էր ջրի վրայով, հասկացավ, որ հրաշքի մեջ է, մի բան, որ ոչ մի իմաստ չուներ նրա մտքի համար: Երբ Պետրոսի միտքը նրան բացահայտեց նրա արածի գերբնական բնույթը, նա ընկալեց, որ դա անհնարին էր, հիմնված այն բանի վրա, ինչ նրա միտքը գիտեր որպես նորմալ: Որպես հետևանք, Պետրոսը սուզվեց, ավելի շուտ հավատալով այն տրամաբանությանը, որ նրա միտքն էր նրան թելադրում, քան այն բանին, ինչ Սուրբ Հոգին էր նրան մղում հավատով ընդունելու:

Կլինեն ժամանակներ, երբ դու կգիտակցես, թե որքան ես դու հավատի մեջ թուլացել, և ստիպված կլինես որոշում կայացնել՝ կհանձնվե՞ս, թե՞ կշարունակես առաջ գնալ: Գաղատացիս 5.24-ը մեզ ասում է, որ մարմինը հոգու դեմ է պատերազմում: Մարմինը հնարավոր չէ վերադաստիարակել կամ դրա հետ բանակցել: Մարմինը՝ հին մարդը, պետք է մեռնի: Այն պետք է խաչվի: Միշտ հիշիր, հավատն է, որ հաղթում է: Աստված մեզ տվել է ոչ թե վախի հոգի, այլ՝ որդեգրության, որով մենք աղաղակում ենք՝ Աբբա, Հայր (Հռոմեացիս 8.15):

Երբ զգում ես, որ մոտ ես հուսահատվելու, ինքդ քեզ մի քանի հարց տուր: Այն ցավը, որ զգում ես, համարժե՞ք է այն վարձատրությանը, որ ակնկալում ես:

Եթե դու հուսահատվես, որտե՞ղ և ինչի՞ն ես դու վերադառնալու: Հովհաննես 6.66-ում Հիսուսն աշակերտներին հարցրեց, թե արդյոք նրանք ուզում էին վերադառնալ իրենց հին կենսակերպին: Պետրոսն ասաց. «Տեր, մենք ո՞ւմ գնանք. Դու հավիտենական կյանքի խոսքերն ունես»:

Հասարակական լարվածություններ

Ծոմապահության հետ կապված հաճախակի տրվող հարցը հետևյալն է. «Պե՞տք է մարդկանց ասել, որ ծոմ ես պահում»: Քանի որ ծոմապահությունն անձն ուրանալու և Տիրոջը նվիրվելու հնարավորություն է, դրա վերաբերյալ անընդհատ քննարկումները կարող են շեղող ազդեցություն ունենալ: Մարդիկ կռմբահարեն քեզ իրենց անթիվ ու անհամար հարցերով քո առողջության վերաբերյալ, առաջարկություններ անելով սննդակարգի վերաբերյալ և պատմելով սարսափազդու պատմություններ ծոմ պահելու վտանգների մասին: Ծոմապահության ընթացքում այս տեսակի միջամտությունը կարող է մեծապես շեղել քեզ:

Առավելագույն օգուտի համար, ամենալավը կլինի այն, որ ոչ ոքի չասես, որ ծոմ ես պահում: Հիսուսը դեմ էր, երբ կրոնական առաջնորդները մարդկանց ուշադրությունը հրավիրում էին իրենց վրա, մարդկանց մոտ տպավորություն ստեղծելով, որ իրենք տառապում են Տիրոջ համար (Մատթեոս 6.16-18): Կրոնական առաջնորդները դա անում էին փորձելով իրենց ավելի մեծ ներկայացնել, դրանով իսկ ակնհայտորեն ոչնչացնում էին իրենց ծոմապահության նպատակը: Եթե քո ծոմապահությունը տևում է 1-7 օր, դա հեշտ կլինի ծածկել: Սակայն ժամանակն անցնելով դու կսկսես նիհարել և ավելի դժվար կլինի խուսափել քո արտաքինի հետ կապված հարցերից: Ամեն կերպ խուսափիր ջրազրկվելուց և աշխատիր լավ խնամված տեսք ունենալ:

Վերջ ի վերջո, կլինեն մարդիկ, ովքեր գլխի կընկնեն, որ դու ծոմ ես պահում, սակայն դու կարող ես այդ իրավիճակը դարձնել շինաբեր: Քեզ վրա ուշադրություն հրավիրելու և փառքն Աստծուն տալու միջև կա հավասարակշռություն: Դու պետք է որոշես երբ և ինչպես քննարկել այդ թեման, որովհետև քո վկայությունը կարող է գործածվել քաջալերելու մյուսներին, որպեսզի նրանք էլ ծոմ պահեն: Դու պետք է «միշտ պատրաստ լինես հեզությամբ ու երկյուղածությամբ պատասխան տալու բոլոր նրանց, ովքեր ձեզ կհարցնեն ձեր ունեցած հույսի մասին» (Ա Պետրոս 3.15):

Ծոմ պահելուց հետո

Ծոմապահությունը պատշաճ կերպով ավարտելը նույնքան կարևոր է, որքան այն պատշաճ սկսելը: Ինչպես նախապատրաստվեցիր ծոմը սկսելու համար, այնպես էլ նախապատրաստվիր այն ավարտելու համար:

Ահա մի քանի հարց, որոնք դու կարող ես ինքդ քեզ հարցնել ծոմն ավարտելուց հետո.

- Ի՞նչ կարևոր դասեր սովորեցիր:
- Ի՞նչ նոր սովորություններ և հատկություններ ես դու ուզում պահել:
- Սննդակարգային ի՞նչ նոր կանոնների ես դու հետևելու:
- Ի՞նչ սնունդ ես դու սկսելու ուտել կամ այլևս չուտել:
- Ի՞նչ երազներ ու տեսիլքներ ես դու տեսել Տիրոջ հետ քո ընթացքի կամ ծառայության վերաբերյալ:

Մտիր բնականոն կյանքի մեջ

Նախքան ծոմապահությունն ավարտելն ու կանոնավոր ուտելու ժամանակացույց որոշելը կարևոր կլինի ժամանակ հատկացնել, որպեսզի մտնես բնականոն կյանքի մեջ ըստ քո առօրյայի: Սա կենսական է, եթե ուզում ես կիրառել և կյանքում իրականացնել ծոմապահության ընթացքում սովորած դասերը: Բ Կորնթացիս 11.24-28-ն ասում է, որ Պողոսը «շատ անգամ ծոմի մեջ» էր: Իսկ ինչու՞: Դու ծոմապահությանը պետք է նայես որպես նոր ապրելակերպ, ոչ թե որպես արձակուրդ՝ հին ապրելակերպից: Ըստ Բ Կորնթացիս 5.17-ի «Հներն անցան, և ահա ամեն բան նոր եղավ»: Պարբերաբար ծոմ պահելը քեզ կօգնի պահպանել կարգապահության ու հոգևորության որոշակի մակարդակ, որն անհրաժեշտ է սատանայից գրաված տարածքը պահպանելու համար:

Պարբերաբար ծոմ պահելը մարմինը կպահի ենթակայության մեջ և կծառայի որպես հիշեցում, թե ով է քո կյանքի իրական ղեկավարը: Պարբերաբար ծոմ պահելու ժամանակացույց որոշիր և հետևիր դրան: Կան մարդիկ, ովքեր որոշում են շաբաթը մեկ անգամ 24-ժամանոց ծոմապահություն ունենալ: Մյուսները ծոմ են պահում արևածագից մինչև մայրամուտ, շաբաթը մեկ անգամ: Դու պետք է աղոթես և մի ձև որոշես, որ դու զգում ես Աստված ուզում է քեզ համար, մի համակարգ, որին դու կարող ես հավատարիմ լինել և համապատասխանում է քեզ:

Ֆիզիկապես

Կարևոր կլինի վերահսկել քո ուտելու սովորությունները, երբ դու ավարտում ես ծոմ պահելը: Ծոմապահությունից հետո քեզ կթվա, որ արժանի ես այսօր, վաղը և հաջորդ օրը «արձակուրդ» ունենալու: Հիշիր, որ սննդի չարաշահումը, ոչ թե բուն սնունդը, բազմաթիվ չարիքների պատճառ է հանդիսացել: Եթե դու թույլ տաս, որ սնունդը նորից նստի քո սրտի գահին, վատ սովորություններն արմատ կգցեն և ավելի կհեռացնեն Աստծուն քո սրտի կենտրոնից, քան նախքան ծոմ պահելն էր:
Երբ դու նորից սկսես ուտել, եթե ուշադիր չլինես, անհարմարություն կզգաս: Քեզ կթվա, որ ստամոքսդ ուռած է ու լիքն է: Աստիճանաբար անցիր կոշտ ուտելիքին: Շատ հնարավոր է, որ փորացավ ու փորլուծություն ունենաս մարսողության անսովորության հետևանքով:

Զգացմունքային

Սատանան կաշխատի հետ բերել այն տարածքը, որ Տերը գրավել է նրանից, և կփորձի օգտագործել քո զգացմունքային խոցելիությունը իր նպատակներին հասնելու համար: Դա կարող է լինել խորը հուսահատության ժամանակ, որ տանում է դեպրեսիայի: Հիշիր սա, որպեսզի զգույշ լինես և խելամտորեն ուտես, երբ ավարտում ես ծոմապահությունդ:
Գ Թագավորաց 18-19 գլուխներում, Եղիան դեմ կանգնեց Բահաղի 450 մարգարեներին, որոնք հետևում էին Հեզաբելին ամենազազրելի ու անբարո կրոնի մեջ: Աստված դիմագրավեց ու հաղթեց նրանց մեկ մարդու՝ Եղիայի միջոցով: Սակայն այդ հոգևոր մեծ հաղթությունից հետո հանկարծ տեսնում ենք Եղիային, որ փախչում է մի կնոջից՝ Հեզաբելից: Հեզաբելը սպառնում էր սպանել նրան, և նա իրեն լրիվ միայնակ զգաց: Նա անասելի կերպով հուսահատվեց և Աստծուն խնդրեց, որ վերցնի իր հոգին: Եղիան գերբնական հոգևոր բարձունքի հասավ, որին հետևեց զգացմունքային անկումը: Դու էլ, շատ հավանական է, որ ունենաս նմանատիպ վերելքներ ու վայրէջքներ:

Շնորհակալություն «21-օրյա աղոթքին ու ծոմապահությանը» միանալու համար

Հիսուսը նրանց ասաց.

«Ձեր թերահավատության պատճառով: Ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք և այս սարին ասեք՝ "Այստեղից այնտեղ փոխադրվիր", այն կփոխադրվի: Եվ ձեզ համար անկարելի ոչինչ չի լինի: Բայց այս դիվային սերունդն այլ կերպ դուրս չի գալիս, եթե ոչ աղոթքով ու ծոմով»:

Մատթեոս 17.20-21

ԱՂՈԹՔ՝ ԱՆԵԾՔԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ես հռչակում եմ, որ «Քրիստոսը մեզ փրկագնեց Օրենքի անեծքից՝ մեզ համար անեծք դառնալով (որովհետև գրված է, թե. «Անիծյալ է նա, ով կախվում է փայտիցե)» (Գաղատացիներին 3.13):

1. Տեր Հիսուս Քրիստոսի անունով ես հիմա բերում եմ Նրա խաչի, մահվան, արյան և զոհի, Նրա հարության, կյանքի և դատարկ գերեզմանի, Նրա իշխանության, իրավունքի և տիրակալության ամբողջությունը: Ես բերում եմ Տեր Հիսուս Քրիստոսի կողմից դատապարտություն ցանկացած չար ուժերի, կախարդության, թուղթ ու գրի և անեծքի վրա: Ես բերում եմ ինձ համար խաչված Հիսուս Քրիստոսին ընդդեմ բոլոր անեծքներին, որ եղել են իմ հանդեպ՝ գրված, խոսքվ կամ առանց խոսքի, կամ ինձ փոխանցված:

   (Եթե դու գիտես, որ կան կոնկրետ անեծքներ, օգտակար կլինի անունով նշել դրանք: Օրինակ՝ «մահվան բոլոր անեծքները» կամ «իմ ամուսնության կամ առողջության վրա եղած բոլոր անեծքները» և այլն):

2. Հիսուս Քրիստոսի անունով ու արյունով ես քանդում եմ բոլոր անեծքների իշխանությունն ու կապանքները, որոնք եկել են ինձ՝ մեկ այլ մարդու կողմից փոխանցվելով:

3. Հիսուս Քրիստոսի անունով ու արյունով ես քանդում եմ բոլոր անեծքների իշխանությունն ու կապանքները, որոնք եկել են ինձ՝ ասված խոսքերի միջոցով:

4. Հիսուս Քրիստոսի անունով ես հռչակում եմ թշնամու բոլոր օրինական հիմքերը քանդված, զինաթափված և կործանված: Սատանան ոչ մի իրավունք չունի իմ վրա ոչ մի անեծքի կամ օկուլտական գործողության միջոցով, որևէ զոհաբերության կամ ծեսի միջոցով: Հիսուս Քրիստոսի արյունով ես ազատ եմ: Շնորհակալ եմ, Հիսուս, ինձ ազատելու համար: Ես հրամայում եմ, որ այս բոլոր անեծքներն ու իմ հանդեպ պահանջները հիմա կատարելապես զինաթափվեն և քանդվեն Հիսուս Քրիստոսի անունով և Նրա արյան զորությամբ:

5. Հիսուս Քրիստոսի անունով ես հրամայում եմ բոլոր դիվային ոգիներին, որոնք մուտք են ունեցել իմ հանդեպ անեծքների և ծեսերի միջոցով, հեռանալ և չքվել իմ ու իմ ընտանիքի կյանքից, Տեր Հիսուս Քրիստոսի ամենակարող անունով:

6. Հիսուս, խնդրում եմ Քեզ, ուղարկել Քո հրեշտակներին կատարելապես զինաթափելու բոլոր անեծքներն ու թուղթ ու գրերն իմ վրայից: Զինաթափիր դրանց բոլոր հնարքներն ու մատնիր դրանք կործանման: Ես խնդրում եմ, որ Քո հրեշտակները հեռացնեն բոլոր չար ոգիներին, որոնք ներգրավված են այդ բոլոր անեծքների և թուղթ ու գրերի մեջ, և կապեն Քո ոտքերի տակ դատաստանի համար:

7. Հիմա ես հռչակում եմ բոլոր հոգևոր օրհնությունները, որ Իմ Երկնային Հայրը տվել է ինձ Հիսուս Քրիստոսի միջոցով (Եփեսացիների 1.3): Ես հռչակում եմ այդ բոլոր օրհնությունները բոլոր անեծքների փոխարեն, Տեր Հիսուս Քրիստոսի անունով և իշխանությամբ ու զորությամբ: Հիսուս, թող հիմա այս բոլոր բաներն ամբողջությամբ իրականանան Քո ամենակարող անունով: Ես Քեզ եմ բարձրացնում շնորհակալությունը, պատիվն ու փառքը: Այս բոլորը ես աղոթում եմ մարմնով եկած Նազովրեցի Հիսուս Քրիստոսի ամենակարող անունով և իշխանությամբ:

Աղոթքի ուղեցույց

Խնդրե՛ք Աստծուն, որպեսզի Նա հիշեցնի ձեր ազատագրումը մեղքի կապանքներից՝ Իր անվան շնորհիվ: Խնդրե՛ք, որպեսզի Նա ձեզ տա մի սիրտ, որը աղաղակում է ամեն բանի վերականգնման համար: Խնդրե՛ք, որ Նա բարեհաճ լինի նրանց հանդեպ, ովքեր չեն հավատում Նրան: Աղերսե՛ք այնպես, ինչպես դարեր շարունակ աղերսում էին Նեեմիան և Եկեղեցին՝ ասելով. «Տե՛ր, լսի՛ր մեր աղոթքը»:

Շնորհակալությո՛ւն հայտնեք Հորը Իր խոստմունքների հանդեպ ունեցած հավատարմության համար: Շնորհակալություն հայտնեք այն հաստատուն սիրո համար, որ Նա ցուցաբերել է ձեր հանդեպ:

Խնդրե՛ք Աստծուն, որպեսզի Նա ների Իր ժողովրդի, ձեր ընտանիքի և ձեր անհնազանդությունները:

Jesus replied:

It is because you don't have enough faith! But I can promise you this. If you had faith no larger than a mustard seed, you could tell this mountain to move from here to there. And it would. Everything would be possible for you.

Matthew 17.20-21

A PRAYER FOR BREAKING CURSES

1. I proclaim that "Christ redeemed us from the curse of the law by becoming a curse for us, for it is written: 'Cursed is everyone who is hung on a tree'" (Galatians 3:13).
2. In the name of the Lord Jesus Christ, I now bring the fullness of his cross, death, blood, and sacrifice, his resurrection, life, and empty tomb, his authority, rule, and dominion; I bring judgment from the Lord Jesus Christ against every foul power, witchcraft, black art, and curse. I bring Jesus Christ cursed for me against all curses that have been raised against me—written, spoken, unspoken, or transferred to me.

   [If you know what the exact curses are, it helps to name them. For example, "all curses of death," or "all curses on my marriage or my health," etc.]
3. In the name and by the blood of Jesus Christ, I break the power and hold of every curse that has come to me through transfer by another human being.
4. In the name and by the blood of Jesus Christ, I break the power and hold of every curse that has come to me through words spoken.
5. In the name of Jesus Christ, I declare every legal hold and every legal ground of the enemy broken, disarmed, and destroyed. Satan has no hold over me now through curses or occult practices, through sacrifices or any ritual of any kind. Through the blood of Jesus Christ, I am free. Thank you, Jesus, for setting me free. I order these curses and claims utterly disarmed and dismantled now, through the power of the blood of Jesus Christ, and in his name.
6. In the name of Jesus Christ, I command all demonic spirits that have gained access to me through curses and rituals cut off and banished from me and my household, in the mighty name of the Lord Jesus Christ.
7. Jesus, I ask you to send your angels now to completely disarm all curses and black arts from me; disarm their every device and render them destroyed. I ask your angels to remove all foul spirits involved in these curses and black arts and bind them to your feet for judgment.
8. I now claim every spiritual blessing that my Heavenly Father has given to me in Christ Jesus (Ephesians 1:3). I claim those blessings right here in the very place of all cursing, by the authority and power of the Lord Jesus Christ, and in his name. Jesus, may these things be fully accomplished now through your mighty name. I give you thanks and honor and praise. All of this I pray by the authority and in the mighty name of the Lord Jesus Christ of Nazareth, who came in the flesh.

Guide to Prayer

Thank the Father for His faithfulness to His promises. Thank Him for the steadfast love He has shown you.

Ask the Lord to remind you of your deliverance from the bondage of sin for His name's sake. Ask Him to give you a heart that cries out for the restoration of all things. Ask Him for favor with those who do not believe. Plead as Nehemiah pled, as the Church pleads through the ages, "Lord, hear our prayer."

Ask the Lord to forgive the disobedience of His chosen people, of your family and of you.

ՆԵՐՄԱՆ ԱՂՈԹՔ

1. Հիսուս Քրիստոսի անունով ես որոշում եմ ներել _____ -ին _____-ի համար:

Մատ. 6.12 - Եւ թող մեզ մեր պարտքերը, ինչպէս մենք էլ թողում ենք մեր պարտականներին:

2. Ես չեմ զգում, որ ուզում եմ ներել _____ -ին, բայց ես որոշում եմ դա անել Հիսուս Քրիստոսին *ինազանդվելով*:

3. Ես որոշել եմ ներել իմ կամքով, քանի որ Տերն է ուզում, որ ներեմ, և ես *ուզում եմ* ամեն կերպով նման լինել Քրիստոսին:

4. Ես հասկանում եմ, որ ներում եմ Քրիստոսի համար, ոչ թե որ _____ը արժանի է կամ ուզում է: Ավելին, ներել, չի նշանակում, որ տվյալ անձը չի վիրավորել ինձ, դա նշանակում է, որ նա վիրավորել է ինձ, բայց Քրիստոսի միջոցով ես *որոշում եմ* ներել նրան:

Աղոթքի ուղեցույց

Ողորմած Հայր, խոնարհեցրու՛ իմ սիրտը Քո վկայությունների համար: Բացի՛ր իմ աչքերը, որպեսզի Քո Խոսքի մեջ (Մատ. 6.12) գտնեմ կարողություն ներելու: Արթնացրո՛ւ իմ սիրտը, որպեսզի վախենա Քո անունից, և լիացրո՛ւ ինձ Քո հաստատուն սիրով: Ես խնդրում եմ սա Քո Որդու և Սուրբ Հոգու անունով:

FORGIVENESS PRAYER

1. In the name of Jesus Christ, I *choose* to forgive _____ for _____.

Matt. 6:12 - 12 And forgive us our debts, as we also have forgiven our debt

2. I don't feel like forgiving _____, but I choose to do so out of *obedience* to Jesus Christ.

3. I choose to forgive by my will because the Lord wants me to and I *want* to be more like Christ in every way!

4. I understand that I forgive for Christ, not because _____ deserves it or wants it. In addition, forgiving does not meant the person didn't hurt me, it means they did, but through Christ, I *choose* to forgive them.

Gracious Father, incline my heart to Your testimonies. Open my eyes that I might behold wonderful things in Your Word. Unite my heart to fear Your name and satisfy me with Your steadfast love. I ask this by Your Spirit and through Your Son.

> *Տեր, իմ վեմ, և իմ բերդ և իմ ազատիչ, իմ Աստված, իմ ամրություն, որին ես հուսացած եմ: Ով իմ ասպար և իմ փրկության եղջյուր, Նա իմ բարձր աշտարակն է (Սաղմոս 18.2):*
>
> *The LORD is my rock and my fortress and my deliverer; My God, my strength, in whom I will trust;My shield and the horn of my salvation, my stronghold.*

ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ԱՂՈԹՔԻ ԺԱՅՌԸ

- **«Ժայռ» բառն օգտագործվում է 24 անգամ Սաղմոսների գրքում՝ Աստծո վերաբերյալ:**

  «Տեր, իմ վեմ, և իմ բերդ և իմ ազատիչ, իմ Աստված, իմ ամրություն, որին ես հուսացած եմ: Ով իմ ասպար և իմ փրկության եղջյուր, Նա իմ բարձր աշտարակն է» (Սաղմոս 18:2):

- **Մովսեսն առաջինն էր Աստվածաշնչում, ով օգտագործեց «ժայռ» բառը փոխաբերական իմաստով՝ ի նկատի ունենալով Աստծուն:**

  Ժայռի գործը կատարյալ է, որովհետև Նրա ամեն ճանապարհները իրավունք են» (Երկրորդ Օրինաց 32:4, հմմտ. խս. 13, 15, 18, 30, 31, 37):

  13 Նրանց բերեց երկրի բարգաւաճ վայրերը, նրանց կերակրեց արտերի բերքով, ժայռից ծորող մեղրով ու ապառաժ քարից հոսող իւղով կերակրեց նրանց:

  18 Մի մարդ ինչպէ՞ս կարող է հալածել հազարին, եւ երկուսը՝ հետապնդել տասը հազարին, եթէ ժայռը չի ոչնչացնում նրանց:

  31 Նրանց ժայռը մեր Ժայռի նման չէ…

- **Աստված նույնպես մեր ապաստանն է: Ինչպես Մովսեսը, մենք կարող ենք թաքնվել «Ժայռի» խոռոչի մեջ: Աստված հոգ կտանի մեզ համար:**

ԱՂՈԹՔԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

> *Տեր, դու ավելի հուսալի ես, քան գետինը որի վրա կանգնած եմ ես եւ Քո հավատարմությունը ավելին է քան ես կարող եմ հասկանալ: Շնորհակալություն որ լսում ես իմ ձայնը եւ փրկում ես ինձ երբ կանչում եմ քեզ: Երբ ես ցնցվում եմ Դու հաստատում ես ինձ: Երբ ես փորձության մեջ էի, փրկեցիր ինձ: Ամէն:*

Սաղմոս 18.2

Տեր, իմ վեմ, և իմ բերդ և իմ ազատիչ, իմ Աստված, իմ ամրություն, որին ես հուսացած եմ: Ով իմ ասպար և իմ փրկության եղջյուր, Նա իմ բարձր աշտարակն է (Սաղմոս 18:2):

The LORD is my rock and my fortress and my deliverer; My God, my strength, in whom I will trust; My shield and the horn of my salvation, my stronghold.

Սաղմոս 31.3

Որովհետեւ դու ես իմ վէմը եւ բերդը, եւ քո անունի համար առաջնորդիր ինձ եւ կառավարիր ինձ:

For You are my rock and my fortress; Therefore, for Your name's sake, Lead me and guide me.

Սաղմոս 40.2

Եւ ինձ հանեց կորստի հորիցը՝ տիղմոտ ցեխիցը, եւ վէմի վերայ կանգնացրեց ոտներս, եւ գնացքս հաստատեց:

He also brought me up out of a horrible pit, Out of the miry clay, And set my feet upon a rock, And established my steps.

Սաղմոս 42.9

Ասում եմ Աստուծուն. Ով իմ Վէմ, ի՞նչու մոռացար ինձ. ի՞նչու սգաւոր գնամ ես թշնամիի նեղացնելու համար:

I will say to God my Rock, "Why have You forgotten me? Why do I go mourning because of the oppression of the enemy?

Սաղմոս 71.3

Ապաւինութեան վէմ եղիր ինձ համար, որ միշտ քեզ մօտ գամ. դու հրամայեցիր որ փրկես ինձ, որովհետեւ իմ վէմը եւ իմ բերդը դու ես:

I Be my strong refuge, To which I may resort continually; You have given the commandment to save me, For You are my rock and my fortress.

Սաղմոս 78.16

Առուներ հանեց վէմիցը եւ ջուրեր վայր բերաւ գետերի պէս:

He also brought streams out of the rock, And caused waters to run down like rivers.

Սաղմոս 104.18

Բարձր սարերը վայրի այծերի համար ապաւէն են, եւ վէմերը՝ ձագարների:

The high hills are for the wild goats; The cliffs are a refuge for the rock badgers.

Սաղմոս 137.9

Երանի՜ նրան, ով կը բռնի քո մանուկներին ու կը խփի քարին:

Happy the one who takes and dashes Your little ones against the rock!

Սաղմոս 141.6

Նորանց դատաւորները քարերի վերայ ընկան. եւ նորանք իմ խօսքերը կլսեն որ քաղցր են:

Their judges are overthrown by the sides of the cliff, And they hear my words, for they are sweet.

Սաղմոս 144.1

Օրհնեալ է Տէրը՝ իմ Վէմը, որ սովորեցնում է իմ ձեռքերը կռիւ անելու եւ իմ մատները պատերազմելու:

Praise be to the Lord my Rock, who trains my hands for war, my fingers for battle.

Սաղմոս 144.1

Օրհնեալ է Տէրը՝ իմ Վէմը, որ սովորեցնում է իմ ձեռքերը կռիւ անելու եւ իմ մատները պատերազմելու:

Praise be to the Lord my Rock, who trains my hands for war, my fingers for battle.

His House®
MINISTRIES

9470 MICRON AVENUE
SACRAMENTO, CA 95827
916-856-5683
WWW.HISHOUSEOFWORSHIP.ORG